# ՀՀ ԿԳՄՍՆ «Ա. ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 118 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
# 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դպրոցի տնօրեն՝ Կարինե Հովակիմյան

## ՀՀ ԿԳՄՍՆ «Ա. ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 118 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՀՀ ԿԳՄՍՆ Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունը պատրաստվել է դպրոցի տնօրենի՝ 2021 թ. սեպտեմբերի 7-ի հ. 98 հրամանով ձևավորված ներքին գնահատում իրականացնող հանձնաժողովի կողմից: Հաշվետվության պատրաստման համար հիմք են հանդիսացել դպրոցի ներքին գնահատման ցուցանիշները և չափանիշները, խորհրդակցական մարմինների կողմից դպրոցի գործունեության այս կամ այն ոլորտի վերաբերյալ տրված գնահատումները:
Ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները.

- վիճակագրական տվյալների վերլուծություն
- փաստաթղթային վերլուծություն
- դիտարկում կամ փաստագրում

Դպրոցի գործունեության ներքին գնահատման գործընթացը ներառել է հետևյալ երեք բաղադրիչները՝

1. մեկնարկային պայմանների (ռեսուրսների) գնահատում
2. գործունեության ընթացիկ գնահատում
3. գործունեության արդյունքների գնահատում

Ներքին գնահատման չափանիշները բխում են հանրակրթության պետական չափորոշչով սահմանված պահանջներից և ներառում են՝ սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը, արժեքային համակարգի ձևավորումը, սովորողների զարգացմանն ուղղված գործողությունների առաջնայնությունը, դպրոցի տարեկան աշխատանքային ծրագրում դրանց արտացոլումը, իրականացման արդյունավետությունը:

# Մաս 1

## Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին

Հաստատության անվանումը, համարը — ***ՀՀ ԿԳՄՍՆ «Ա. ԵՐԶՆԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 118 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ***

Հաստատության հասցեն — ***ք. Երևան, Արզումանյան 8***

Հաստատության հեռախոսը — ***(010) 39-10-70, (010) 39-10-20,***

Էլեկտրոնային փոստ — ***school118@schools.am***

Այս մասում հիմնականում արձանագրվել են դպրոցի գործունեությունը նկարագրող վիճակագրական տվյալներ, որոնք ներկայացված են ինչպես 2019-2020ուստարվա համար, այնպես էլ նախորդ երկու ուստարիների հետ համեմատության մեջ՝ բացահայտելով ոլորտը նկարագրող ցուցանիշների և չափանիշների փոփոխության դինամիկան:

***Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար***

| Դասարանների թիվը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխությունների դինամի-կան(աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 10-րդ դասարան | 6 | 7 | 7 | անփոփոխ |
| 11-րդ դասարան | 5 | 6 | 7 | աճ |
| 12-րդ դասարան | 5 | 5 | 5 | անփոփոխ |
| Ընդամենը | 16 | 18 | 19 | աճ |

***Դասարանների թվաքանակի փոփոխության պատճառները կապված են՝***

1. աճը 2021-2022 ուստարում՝

ա) պայմանավորված է դպրոցի հեղինակության բարձրացման հետ

բ) դպրոցում ուսուցման նորարարական համագործակցային մեթոդների կիրառմամբ

գ) տարակարգ ունեցող ուսուցիչների թվաքանակով և դպրոցում տիրող ջերմ ու բարյացակամ մթնոլորտով

***Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար***

| Սովորողների թիվը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխությունների դինամի-կան(աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| 10-րդ դասարան | 128 | 151 | 170 | աճ |
| 11-րդ դասարան | 110 | 131 | 149 | աճ |
| 12–րդ դասարան | 111 | 112 | 129 | աճ |
| Ընդամենը | 349 | 394 | 448 | աճ |

***Ըստ դասարանների սովորողների թվի փոփոխության պատճառները***

2017-2018 ուստարուց սկսած սովորողների թիվը անընդմեջ աճում է: Դա պայմանավորված է դպրոցի հեղինակության բարձրացման հետ, դպրոցում ուսուցման նորարարական համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետությամբ, տարակարգ ունեցող ուսուցիչների թվաքանակով և դպրոցում տիրող ջերմ ու բարյացակամ մթնոլորտով:

*Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Ցուցանիշը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | 351 | 403 | 458 | աճ |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ | 349 | 394 | 448 | աճ |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 16 | 24 | 18 | աճ ,նվազում |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 18 | 17 | 29 | նվազում,աճ |

***Սովորողների թվաքանակի փոփոխությունը պայմանավորված է՝***

*Սովորողների ընդհանուր թվի աճը պայմանավորված է դպրոցի շրջանավարտների հաջողություններով, դպրոցի հեղինակության բարձրացմամբ, ուսուցման նորարարական համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետությամբ, ուսուցիչների բարձր մասնագիտական հմտություններով:*

*Ուստարվա ընթացքում հեռացած սովորողների թվի աճը պայմանավորված է հիմնականում ժողովրդագրական փոփոխություններով (մեկնում են երկրից), ինչպես նաև այլ հանգամանքներով:*

*Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Ցուցանիշը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխությունների դինամի-կան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը | 28 | 30 | 29 | նվազում |
| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը | 22,8 | 24 | 27 | աճ |

***Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածության փոփոխությունը պայմանավորված է.***

- Դասարանների թվի աճով:

*Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար*

| Ուսուցիչների թիվը | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 2 | 3 | 2 | նվազում |
| 30-ից 40 տարեկան | 3 | 6 | 6 | անփոփոխ |
| 40-ից -50 տարեկան | 3 | 4 | 4 | անփոփոխ |
| 50-ից -55 տարեկան | 6 | 3 | 5 | աճ |
| 56 տարեկան և ավելի | 14 | 14 | 12 | նվազում |

***Ուսուցիչների տարիքային կազմի փոփոխության պատճառները՝***

- տարիքային համաչափ փոփոխություն

*Աղյուսակ 6. Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ*

| Պաշտոնը | Անունը, ազգանունը, հայրանունը | Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը | Տվյալ հաստատութ. աշխատելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | Հովակիմյան Կարինե Կարլենի | 16 տարի | 16 տարի | Պատվոգրեր, շնորհակալագրեր ՀՀ ԿԳՆ հուշամեդալ |
| Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով | Օզանեզովա Մարիցա Ռոբերտի | 11տարի | 30 տարի | Շնորհակալագիր ՀՀԿԳՄՍՆ կողմից իրականացված «Տարվա լավագույները» մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու համար |
| Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով | Մինասյան Նաիրա Գառնիկի | 10 տարի | 29 տարի | Շնորհակալագիր ՀՀԿԳՄՍՆ կողմից իրականացված «Տարվա լավագույները» մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու համար |
| Տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքի գծով | Պետրոսյան Արևիկ Դավիթի | 7տարի | 8 տարի | «Հայաստանի ստեղծարար ուսուցիչ» հանրապետական մրցույթի եզրափակիչ փուլում հաղթող |
| | | | | Շնորհակալագիր ՀՀԿԳՄՍՆ կողմից իրականացված «Տարվա լավագույները» մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու համար |
| Տնօրենի տեղակալ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով | Ասկիջյան Հերմինե Աշոտի | 10 տարի | 13 տարի | |

*Աղյուսակ 7. Տվյալներ ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ*

| Անուն, ազգանուն | Ներկայացնում է | Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը | Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը | Պետական պարգևները, կոչումները և այլն |
|---|---|---|---|---|---|
| Էլոյան Միրանուշ | ՀՀ ԿԳՄՍՆ | ՀՀ ԿԳՄՍՆ անձնակազմի կառավարման վարչության գլխ. մասնագետ | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |
| Նազարյան Նելլի | ՀՀ ԿԳՄՍՆ | ՀՀ ԿԳՄՍՆ անձնակազմի կառավարման վարչության գլխ. մասնագետ | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |
| Մխիթարյան Էլյա | ՀՀ ԿԳՄՍՆ | ՀՀ ԿԳՄՍՆ լիցենզավորման գործակալության գլխ.մասնագետ | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |
| Աղամյան Ծովինար | ՀՀ ԿԳՄՍՆ | ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. ԵՄՀ դասախոս | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |
| Ղարդաշյան Ժաննա | Երևանի քաղաքապետարանը | Երևանի քաղաքապ-ետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության դպրոցական բաժնի պետ | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |
| Խաչյան Արմենուհի | Դպրոցի մանկավարժա-կան խորհուրդը | Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցի ուսուցիչ | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |
| Թումաղայան Աննա | Դպրոցի մանկավարժա-կան խորհուրդը | Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցի ուսուցիչ | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |
| Վարդերեսյան Նաիրա | Դպրոցի ծնողական խորհուրդը | «ՍՊ» հոլդինգ, մենեջեր | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |
| Մելքումյան Արփինե | Դպրոցի ծնողական խորհուրդը | «Թումո» ստեղծարար կենտրոն, մենեջեր | բարձրագույն | 2021 թ. հունիսի 25-ից | |

*Դպրոցի խորհուրդը 2021-2022 ուստարում իրականացրել է ՀՀ օրենսդրությամբ, դպրոցի կանոնադրությամբ սահմանված կոլեգիալ կառավարումը. գումարել է նիստեր, քննարկել և հավանության է արժանացրել 2021-2022 ուստարվա հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները, լսել և հավանության է արժանացրել դպրոցի ներքին գնահատման արդյունքները, տարեկան և եռամսյա հաշվետվությունները, քննարկել և հավանություն է տվել 2021թ. բյուջեի նախագծին, հիմնադրի սահմանած կարգով սահմանել է դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները, քննարկել և հավանություն է տվել շահույթի բաշխման նախագծին և այլն:*

# Մաս 2

## Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը

Դպրոցի գործունեության լիարժեք գնահատման գործընթացը ներառում է ուսումնական միջավայրի անվտանգության գնահատումը, որը վերաբերում է ոչ միայն սովորողների անվտանգ և առողջ կենսագործունեությանը, այլև ուսուցիչների, վարչական ու սպասարկող անձնակազմի աշխատանքի, կյանքի և առողջության համար անվտանգ պայմաններ ապահովելուն:

- Դպրոցի խնդիրն է՝ ապահովել ուսումնական գործընթացի իրականացումը և սովորողների հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական լիարժեք բարեկեցությունը ու համակողմանի զարգացումը: Դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվության 2-րդ մասի պատրաստման համար վարվել է ինքնավերլուծության հատուկ գրանցամատյան, ուր հաստատատությունում սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության և առողջության պահպանման գնահատման չափանիշներն ու ցուցանիշները դիտարկելով՝ հաստատությունը վերոնշյալ գրանցամատյանում ազատ շարադրանքով նկարագրել է տարածքի, շենքի ու շինության գույքի անվտանգ շահագործման, սովորողների ու աշխատակիցների անվտանգ կենսագործունեության ապահովման և առողջության պահպանման հետ կապված վիճակը և առկա խնդիրները: Իրականացվել են դիտարկում-փաստագրումներ:

*1.1. ՀՀ ԿԳՄՍՆ «Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը*

- Դպրոցի տարածքը պարսպապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար:
- Դպրոցն ունի տարածք՝ մեկուսացված աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից:
- Դպրոցը գտնվում է բանուկ ավտոճանապարհի մոտ, վերգետնյա կամ ստորգետնյա անցումներ չկան:
- Դպրոցի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղերում և դուրս են բերվում հաստատության տարածքից:
- Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները անարգել կարող են մոտենալ հաստատության շենքին:
- Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար միջոցառումներ են իրականացվում կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:

***1.2. Դպրոցում պահպանվում են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպվել են համապատասխան ծառայություններ***

Դպրոցը ունի կաթսայատուն և ուսումնական 3 մասնաշենք, որոնցից նորոգված է միայն հիմնական մասնաշենքը, որի վերանորոգումը նույնպես ավարտուն չէ (նորոգված չէ 4-րդ հարկի մեկ հարկաբաժինը): Որոշակի վերանորոգման աշխատանքներ են իրականացվել 2-րդ մասնաշենքի 2-րդ հարկում, որպեսզի հնարավոր լիներ կազմակերպել ուսումնական գործընթացը սովորողների թվի աճի պայմաններում: Փոխվել են վեց դասասենյակների և միջանցքի պատուհանները (8 հատ 6 x 2.2մ), կոսմետիկ վերանորոգվել են նշված դասասենյակներն ու միջանցքը:

Հիմնանորոգման կարիք ունի մարզադահլիճի մասնաշենքը և 2-րդ մասնաշենքի 3-րդ հարկը (հնամաշ պատուհանների թույլ փեղկեր, տանիքի անկայուն ծածկ, մասնաշենքը կայուն չէ որոշ վտանգների նկատմամբ, օրինակ՝ ուժեղ քամիների, հորդառատ անձրևների... ), որտեղ անհնար է ուսումնական գործընթաց կազմակերպել, ինչի հետևանքով դպրոցի սովորողների ուսուցումը կազմակերպվում է մեծ մասնաշենքում և 2-րդ մասնաշենքի միայն 2-րդ հարկում, որի ընդհանուր մակերեսը կազմում է 3427,7(2935+492,7) քառ. մ, որը ըստ նորմատիվի բավարար է մեկ սովորողի համար սահմանված մակերեսի հաշվարկով, սակայն կիսվող դասարանների պատճառով ստիպված ենք որպես դասասենյակ օգտագործել աշակերտական խորհրդի աշխատասենյակը, համակարգչային

կաբինետները, լաբորատորիաները, ինչը խոչընդոտում է սովորողների ուսուցման, դաստիարակման, ինքնավարության զարգացման գործընթացների որակյալ իրականացմանը: Ընթացքի մեջ է մարզադահլիճի հիմնանորոգման նախապատրաստման գործընթացը:

Դպրոցի հիմնական մասնաշենքում առկա են պահուստային 4 ելքեր՝ դեպի դուրս բացվող. 2-րդ մասնաշենքում երկրորդ հիմնական պահուստային ելքը փակ է և չի գործում, ինչը վտանգում է դպրոցի սովորողների անվտանգությունը:

Դպրոցն ապահովված է կապի, արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով:

Դպրոցն ունի հեռախոսագիծ և դասամիջոցների ազդարարման համակարգ (զանգ): Դրանք գործում են անխափան. էլեկտրաէներգիայի խափանման դեպքում օգտագործվում է ձեռքի մետաղյա զանգ:

Դպրոցի շենքը չունի կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող սովորողների (հենաշարժողական խնդիրներ ունեցող) ազատ տեղաշարժն ապահովող պայմաններ (թեքահարթակներ, լայն դռներ):

Դպրոցն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, սակայն անհրաժեշտ է վերականգնել խորհրդային շրջանից չգործող հրշեջ ծորակների համակարգը. տանիքը պատված է հրակայուն նյութերով:

Դպրոցում ոչ կառուցվածքային վտանգներ չկան. համակարգչային սարքավորումները, հեռուստացույցները ամրացված են աշխատատեղերին, անիվներով տեղաշարժվող ծանր իրերը ամրացված են հատակին:

Դպրոցի կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը

Դպրոցի միջանցքների հատակները սայթաքուն չեն, ուղեգորգով ծածկված տարածքներ չկան:

Դպրոցի ստորին հարկերի պատուհանները ունեն մետաղյա վանդակաճաղեր, որոնք, սակայն, շարժական չեն:

Դպրոցի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է:

Դպրոցում մշակված է և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան: Դպրոցի նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով: Դրանց մասին բոլոր սովորողները տեղեկացված են և փորձնական տարհանումների միջոցով գիտեն/սովորում են օգտվել դրանցից: Դպրոցի տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:

Կորոնավիրուսային համավարակի պայմաններում դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի անխափան և արդյունավետ կազմակերպումը իրականացվել է համաձայն հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույցի:

### *2.3. Ուսումնական հաստատության նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ*

Դպրոցը պահպանում է իր նախագծային հզորությունը:

- Դպրոցի սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին: Դասարանում սովորողների առավելագույն թիվը 30-ńն է: Դասարաններում սովորողների փաստացի միջին թիվը ≈24 է: Ուսպլանով և սանիտարական նորմերով սահմանված պահանջները կատարվում են:
- Դպրոցի դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին:
- Դպրոցի սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները չեն կարողանում լիարժեք անցկացնել մարզադահլիճում, անբարենպաստ պայմանների պատճառով: Դպրոցը ունի մեկ մարզադահլիճ և երկու հանդերձարան շենքի ներսում: Ունի բացօթյա մարզահրապարակ:
- Դասարաններում աշակերտական նստարանները դասավորված են կա՛մ ավանդական երեք շարքով, կա՛մ խառը: Հաճախ ուսուցման կոլեկտիվ եղանակին բնորոշ մեթոդիկաների կիրառմամբ պայմանավորված՝ ուսումնական պարապմունքի ընթացքում աշակերտական սեղանները վերադասավորվում են փոփոխական կազմով զույգերով, չորս կամ վեց սովորողի համագործակցային աշխատանքը արդյունավետ կազմակերպելուն միտված հարմար ձևով (շրջանաձև, T-աձև, П-աձև, խառը): Վերադասավորությունը մեծ ժամանակ չի խլում դասից: Վերադասավորումները ուսուցիչը

հիմնականում կազմակերպում է դասամիջոցին՝ դասից առաջ: Դասերը կազմակերպվում են նաև էլեկտրոնային միջոցների կիրառմամբ, երբ դասի ընթացքում աշակերտները ինքնուրույն աշխատանքի ժամանակ օգտագործում են համակարգիչներ: Այս դեպքում դասասենյակում նստարանները վերադասավորվում են կազմակերպվող աշխատանքի համապատասխան ձևով:

*Աղյուսակ 8. Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ*

| Դասասենյակի | Դասասենյակի մակերեսը (քմ) | Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև,П-աձև, խառը) | Սեղան-նստարան-ներիթիվը | Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները |
|---|---|---|---|---|
| Դասասենյակ N 107-108 | 80,5 | T-աձև | 20/30 | 1.25 |
| Դասասենյակ N 105 | 49.2 | Խառը | 14/28 | 1.5 |
| Դասասենյակ N 201 | 49.2 | Խառը | 10/10 | 1.5 |
| Դասասենյակ N 202 | 48,6 | Խառը | 6/12 | 1.5 |
| Դասասենյակ N 203 | 49.0 | Խառը | 13/26 | 1.5 |
| Դասասենյակ N 204 | 49,2 | Խառը | 15/30 | 1.5 |
| Դասասենյակ N 205 | 48,6 | Խառը | 15/30 | 1.5 |
| Դասասենյակ N 206 | 49,0 | Խառը | 13/26 | 1.5 |
| Դասասենյակ N 207-208 | 80,5 | П-աձև | 20/23 | 2.5 |
| Դասասենյակ N 307-308 | 80,5 | Խառը | 20/20 | 1.5 |
| Դասասենյակ N 301 | 49,2 | Խառը | 8/16 | 1.5 |
| Դասասենյակ N 302 | 48,6 | Խառը | 15/30 | 1.5 |
| Դասասենյակ N 303 | 49,0 | Խառը | 14/28 | 1.5 |
| Դասասենյակ N 304 | 49,2 | Խառը | 13/26 | 1.5 |
| Դասասենյակ N 305 | 48,6 | Խառը | 15/30 | 1.5 |
| Դասասենյակ N 309 | 31.0 | Խառը | 8/16 | 1.5 |
| Դասասենյակ N 310 | 49,2 | Խառը | 15/15 | 1.5 |
| Դասասենյակ N 401 | 50,4 | Խառը | 22/22 | 1.5 |
| Դասասենյակ N 402 | 49,8 | Խառը | 12/24 | 1.5 |
| Դասասենյակ N 403 | 49,5 | Խառը | 14/28 | 1.5 |
| Դասասենյակ N 404 | 54,0 | Խառը | 15/30 | 1.5 |
| Դասասենյակ N 407 | 32.4 | Խառը | 10/10 | 1.5 |
| Դասասենյակ N 409-410 | 85,9 | T-աձև | 20/20 | 1.25 |

*Աղյուսակ 9. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ*

| Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ) | Նորմերից պակաս կամ ավել մակերեսը (քմ) |
|---|---|---|---|
| ԴասասենյակN107-108 | 80.5 | 2.68 | ավել է 0.68 |
| Դասասենյակ N 105 | 49,2 | 1.82 | պակաս է 0.18 |
| Դասասենյակ N 201 | 49,2 | 3.28 | ավել է 1.28 |
| Դասասենյակ N 202 | 48,6 | 4.05 | ավել է 2.05 |
| Դասասենյակ N 203 | 49,2 | 3.51 | ավել է 1.51 |
| Դասասենյակ N 204 | 49,2 | 1,64 | պակաս է 0,36 |
| Դասասենյակ N 205 | 48,6 | 1.62 | պակաս է 0.38 |
| Դասասենյակ N 206 | 49,0 | 1.88 | Պակաս է 1.12 |

| | | | |
|---|---|---|---|
| Դասասենյակ N 207-208 | 80,5 | 4.03 | ավել է 2.03 |
| ԴասասենյակN 307-308 | 80,5 | 4.03 | ավել է 2.03 |
| Դասասենյակ N 301 | 49,2 | 3.28 | ավել է 1.28 |
| Դասասենյակ N 302 | 48,6 | 1.62 | պակաս է 0.38 |
| Դասասենյակ N 303 | 49,0 | 1.81 | պակաս է 0.19 |
| Դասասենյակ N 304 | 49,2 | 1.89 | պակաս է 0,11 |
| Դասասենյակ N 305 | 48,6 | 1.67 | պակաս է 0,33 |
| Դասասենյակ N 309 | 31.0 | 2.6 | ավել է 0.6 |
| Դասասենյակ N 310 | 49,2 | 1.64 | պակաս է 0,36 |
| Դասասենյակ N 401 | 50,4 | 2.29 | ավել է 0.29 |
| Դասասենյակ N 402 | 49,8 | 2.16 | ավել է 0.16 |
| Դասասենյակ N 403 | 49,5 | 1,76 | պակաս է 0,24 |
| Դասասենյակ N 404 | 50,4 | 1.68 | պակաս է 0.32 |
| Դասասենյակ N407 | 32.4 | 3.24 | ավել է 1.24 |
| Դասասենյակ N409-410 | 85,9 | 4.29 | ավել է 2.29 |

### 1.4 *Ուսումնական հաստատության անձնակազմի և սովորողների անվտանգ կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ*

*Դպրոցն իրականացնում է նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությունների ձևավորմանը*

- Դպրոցի անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին: Աշխատակազմը և սովորողները տեղեկացված են հակահրդեհային անվտանգության կանոններին, երկրաշարժի ժամանակ պաշտպանվելու ձևերին, քիմիական վարակ ազդանշանների կանոններին:

- Դպրոցի անձնակազմը և սովորողները տեղեկացված են դպրոցում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին: Հաստատությունում անվտանգության որոշ միջոցներ չեն գործում (օրինակ՝ հրշեջ-ծորակներ): Դպրոցի յուրաքանչյուր հարկում առկա են կրակմարիչներ:

- Դպրոցում իրականացվում են տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ:

- Դպրոցում առկա է ԱՌՆ-ի և ԱԻ-ում գործելու պլան, քաղաքացիական պաշտպանության պլան, որոնք գործարկվում են ուսումնական տարվա ընթացքում,իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան:

- Դպրոցն ապահոված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով:

- Դպրոցի բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

- Դպրոցի միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

- Դպրոցն ապահոված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:

- Դպրոցի սանհանգույցները հիմնական մասնաշենքում վերանորոգված են, յուրաքանչյուր հարկում տեղակայված են աղջիկների և տղաների սանիտարական հանգույցներ, բացառությամբ 4-րդ հարկի, որտեղ գտնվում է հանդիսությունների դահլիճը և փոքրաթիվ դասասենյակներ: Դպրոցի հիմնական մասնաշենքը ունի վեց սանհանգույց: 2-րդ մասնաշենքի առաջին հարկում գործում է արվեստի դպրոց, մասնաշենքն ունի երեք սանհանգույց, որոնք ունեն հիմնանորոգման կարիք: 3-րդ մասնաշենքը (մարզադահլիճը) սանհանգույց չունի:

- Դպրոցի բոլոր սանհանգույցները ապահոված են հոսող ջրով, ապահոված են հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն):
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար ուսումնական հաստատությունում չկա հարմարեցված սանհանգույց:
- Դպրոցում առկա է սննդի կետ: Սննդի կետի տեսակը՝ բուֆետ: Վերանորոգված է: Բուֆետն ապահովված է 2 լվացարանով և լվացվելու պարագաներով:
- Դպրոցում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն:

***Չափանիշներ 1 և 2***

***Աղյուսակ 10. Տվյալներ արտակարգ իրավիճակներում հաստատության անձնակազմի և սովորողների տեղեկացված լինելու մասին***
Դիտարկման ամսաթիվ՝ 14.03.2022թ-18.03.2022թ

| N | Չափանիշը | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին *(գրել փաստաթղթի անվանումը և ընդունման ամսաթիվը, թվարկել առկա գույքը)* Արձանագրել իրավիճակը |
|---|---|---|
| 1. | Դպրոցի աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին | Տարհանման սխեմա. հաստատված է 16.03.2017:<br><br>Առկա են՝ պատգարակներ, ռադիացիայի չափման սարք: |
| 2. | Դպրոցի աշխատակազմը և սովորողները տեղեկացված են դպրոցում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի, հրշեջ ծորակի և այլն) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին | Առկա են՝ կրակմարիչներ, հակահրդեհային ստենդ, հեռախոսակապ:<br>Դպրոցի աշխատակազմը և սովորողները տեղեկացված են հրշեջ ծորակի տեղի մասին, սակայն դրա օգտագործման կանոններին տեղեկացված են տեսականորեն, քանի որ դպրոցի հրշեջ ծորակները չեն գործում: |

*Հարցման արդյունքում դպրոցի աշխատակազմի և սովորողների մոտ 81% -ը տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին, իսկ 19 % տիրապետում են մասամբ:*

***Աղյուսակ 11. Տվյալներ տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության ու հակազդման մեխանիզմների ուղղությամբ հաստատությունում իրականացվող միջոցառումների վերաբերյալ***

| Ամսաթիվը | Դասարանը | Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված ուսումնական նյութերը և պարագաները | Մասնակից սովորող-ների և աշխատակից-ների թիվը |
|---|---|---|---|
| 2021-2022 | X-XII | Հրդեհի տեղայնացման և մարման ձևերը: Կրակ-մարիչների օգտագործման ձևերը: Հակաճառա-գայթային պատսպարման ձևերից օգտվելու վարքականոնները: Երկրաշարժի ժամանակ պաշտպանության միջոցները: | 420 |
| 2021-2022 | X-XII | Կրակմարիչների օգտագործման ձևերը: | 410 |
| 2021-2022 | X-XII | Հակաճառազայթային պատսպարման ձևերից օգտվելու վարքականոնները: | 320 |
| 2021-2022 | X-XII | Երկրաշարժի ժամանակ պաշտպանության միջոցները: | 450 |
| 2021-2022 | X-XII | Կենցաղային թունավորումների ժամանակ անհետաձգելի միջոցառումներ: | 380 |
| 2021-2022 | X-XII | Պատերազմական իրավիճակում անհրաժեշտության դեպքում ապաստարաններից օգտվելու կանոններ: | 350 |

*Աղյուսակ 12. Տվյալներ ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանից բխող սովորողների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքներիվերաբերյալ*

| Ամսաթիվը | Դասարանը | Միջոցառման/վարժանքի անվանումը, նկարագիրը և օգտագործված պարագաներն ու ուսումնական նյութերը | Մասնակից սովորողների և աշխատակիցների թիվը |
|---|---|---|---|
| 08.09.21 | X-XII դասարանների սովորողներ | ԱԻ աշխատակցի օրվան նվիրված դասախոսություն «Վարքի կանոնները երկրաշարժի դեպքում» թեմայով | 380 |
| 03.12.21 | X-XII դասարանների սովորողներ | «Աղետներին դիմակայունության օր» խորագրով համապետական միջոցառման անցկացում | 390 |
| 03.03.22 | X-XII դասարանների սովորողներ, ուսուցիչներ | Դասախոսություն ՔՊ օրվան նվիրված «Տարհանման կազմակերպումը դպրոցում» թեմայով | 420 |
| 21.03.22 | X դասարանների սովորողներ | Երկրաշարժի դեպքում վարքականոնների մասին կինոֆիլմի դիտում | 150 |
| 06.05.22 | X-XII դասարանների սովորողներ, ուսուցիչներ | Հատուկ տակտիկական ուսումնավարժություն «Կազմավորումների գործողությունները երկրաշարժի դեպքում» | 450 |

*10-րդ (3 ժամ ), 11-րդ (5 ժամ ) դասարաններում ՆԶՊ –ի ժամերին ուսումնասիրվել են «Անվտանգ կենսագործունեության» թեմաները:*
*Ստեղծվել են ՔՊ-ի և ԱԻ-ի համապատասխան կազմավորումներ: Յուրաքանչյուր կազմավորման (կապի, հակահրդեհային, հետախուզական, փրկարարական, հասարակական կարգի պահպանման, բժշկական) հետ տարվել է բացատրական աշխատանք: Ստեղծվել է ՀՀ Երևանի Աջափնյակ համայնքի ՀՀ ԿԳՄՍՆ «Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ԱՌՆ և ԱԻ-ում գործելու պլան: Հարցման արդյունքում դպրոցի աշխատակազմի և սովորողների մոտ 81 % -ը տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին:*

***Աղյուսակ 13. Տվյալներ դպրոցի շենքի ջեռուցման պայմանների մասին***
Դիտարկման ամսաթիվ 10.02.2022

| Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով | | | |
|---|---|---|---|
| **Այո** | Ոչ *(նկարագրել թե ինչպես է ջեռուցվում դպրոցի շենքը)* | | |
| Դասասենյակները, դահլիճները, այլ սենյակները, միջանցքները և այլն | Ջեռուցման ձևը, (վառելիքի տեսակը) | Ջերմաստիճանը շրջայցի պահին | Ջեռուցման ժամերը |
| Սենյակ N101 /տնօրենի աշխատ./ | Գազ | 22º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N105 | Գազ | 21º | 23:00 -15:00 |
| Սենյակ N106 /օժ. սենյակ/ | Գազ | 21º | 23:00 -15:00 |
| ՍենյակN107,108/քիմիաի լաբ../ | Գազ | 21º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N201 | Գազ | 20.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N202 | Գազ | 20,6º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N203 | Գազ | 20,6º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N204 | Գազ | 20,6º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N205 | Գազ | 21º | 23:00 -15:00 |

| | | | |
|---|---|---|---|
| Դասասենյակ N206 | Գազ | 22º | 23:00 -15:00 |
| ԴասասենյակN207,208/ֆիզ.լաբ./ | Գազ | 19º | 23:00 -15:00 |
| Սենյակ  N209 | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N210 | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N301 | Գազ | 20º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N302 | Գազ | 21º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N303 | Գազ | 22º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N304 | Գազ | 22º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N305 | Գազ | 22º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N307, 308 | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N309 | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N310 | Գազ | 19º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N401 | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N402 | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N403 | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N404 | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N405 | Գազ | 18º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N406 | Գազ | 18º | 23:00 -15:00 |
| Դասասենյակ N407 | Գազ | 18º | 23:00 -15:00 |
| ԴասասենյակN409,410/կենս. լաբ. / | Գազ | 18º | 23:00 -15:00 |
| Մարզադահլիճ | Գազ | 18.5º | 23:00 -15:00 |
| Բուժկետ /102/ | Գազ | 22º | 23:00 -15:00 |
| Գրադարան /103/ | Գազ | 21º | 23:00 -15:00 |
| Բուֆետ /104/ | Գազ | 22 º | 23:00 -15:00 |
| Սանհանգույցներ 100, 200, 300 | Գազ | 20º | 23:00 -15:00 |
| Ուսուցչանոց /306/ | Գազ | 20 º | 23:00 -15:00 |
| Հանդիսությունների դահլիճ /408/ | Գազ | 19º | 23:00 -15:00 |
| 1-ին հարկի միջանցք | Գազ | 20º | 23:00 -15:00 |
| 2-րդ հարկի միջանցք | Գազ | 20º | 23:00 -15:00 |
| 3-րդ հարկի միջանցք | Գազ | 20 º | 23:00 -15:00 |
| 4-րդ հարկի միջանցք | Գազ | 18,5º,18.5º | 23:00 -15:00 |

***Աղյուսակ 14. Տվյալներ դպրոցի ջրամատակարարման, սանհանգույցների (կոյուղացման) առկայության և դրանց վիճակի վերաբերյալ***

| Հաստատության ջրամատակարարումը *(լրացնել համապատասխան սյունակը)* | | |
|---|---|---|
| Ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով *(ընդգծել այո կամ ոչ բառերը)* | Ապահովված է հոսող խմելու ջրով, բայց ոչ շուրջօրյա | Ապահովված չէ հոսող խմելու ջրով |
| ***այո*** | Օրեկան քանի՞ ժամ է ջրամատակարարումը | *(նկարագրել խնդիրը)* |
| ոչ | | (*պարզաբանել ինչպե՞ս է լուծվում ջրամատակարամաn հարցը*) |

| Հաստատության սանհանգույցները և դրանց վիճակը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շենքի հարկ | Սանհան գույցների թիվը | Աղջիկնե-րի սան-հանգույցի առկա-յությունը | Տղաների սանհան-գույցի առկայու-թյունը | Հիգիենայի պարագաների առկայությունը | Հարմարեցվածու-թյունը հաշման-դամությունունեցո ղ անձանց կարիքներին | Վերանորոգված են, թե ոչ |
| 1-ին մասնաշենք | | | | | | |
| 1-ին հարկ | 2 | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2-րդ հարկ | 2 | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| 3-րդ հարկ | 2 | Այո | Այո | Այո | Ոչ | Այո |
| 4-րդ հարկ | 0 | Ոչ | Ոչ | Ոչ | Ոչ | Ոչ |
| 2-րդ մասնաշենք | | | | | | |
| 2-րդ հարկ | 2 | Այո | Այո | Այո | Ոչ | Ոչ |
| 3-րդ հարկ | 1 | Այո | Ոչ | Ոչ | Ոչ | Ոչ |
| 3-րդ մասնաշենք /մարզադահլիճ/ | 0 | Ոչ | Ոչ | Ոչ | Ոչ | Ոչ |

***Աղյուսակ 15. Տվյալներ ուսումնական հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ***

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, թե ոչ | | | | | |
| Այո | | | | | |
| Ուսումնական հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ, թե ոչ | | | | | |
| Այո | | | | | |
| Նկարագրել սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության | | | | | |
| Սննդի կետի տեսակը | Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձնաց թիվը և տարածքը (քմ) | Սառը և տաք հոսող ջրի առկայությունը | Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը | Տաք սննդի հնարավորությունը | Վերանորոգված է, թե ոչ |
| բուֆետ | 48,7 քմ / 25 անձ | Այո/սառը/ | Այո | Ոչ | Այո |

*2021-2022 ուստարում դպրոցում բուֆետը չի գործել՝ պայմանավորված համավարակային իրավիճակով, և սովորողների սնունդը կազմակերպվել է մերձակա մթերային խանութներից գնումներով. Այս իրավիճակը բացասական ազդեցություն է ունեցել դպրոցում սովորողների կարգապահության վրա (հաճախակի են դարձել ուշացումները):*

***Աղյուսակ 16. Տվյալներ ուսումնական հաստատությունում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ***

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ | | | | | |
| Այո | | | | | |
| Ուսումնական հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը) | | | | | |
| Այո | | | | | |
| Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ) | Բուժաշխա-տողների թիվը և նրանց պաշտոնները | Բուժկետում առկա գույքը | Բուժկետը վերանորոգված է, թե ոչ | Սանիտա-րական վիճակը | Առաջին բուժօգ-նության միջոցների և դեղերի առկայությունը |
| I հարկ 14,9 | 1 բուժքույր | Գրասեղան, աթոռներ, հասակաչափ, կշեռք, բազմոց, բժշկական գործիքների | Այո | բավարար | Բուժկետն ապահով-ված է դեղորայքով, բուժօգտագործման միջոցներով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | սեղան, դեղերի պահարան, դեղատուփ | | | |

## *2.5. Սոցիալական առողջության չափանիշներ*

*Դպրոցն իրականացնում է սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ:*

- Դպրոցում իրականացվում են ծրագրեր՝ ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելու համար:
- Դպրոցում իրականացվում են մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերի կանխման կամ դրանց բացահայտման աշխատանքներ:
- Դպրոցում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ:
- Դպրոցն իրականացնում է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ:
- Դպրոցում կազմակերպվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով.
- Դպրոցն ստեղծում է ուսումնամեթոդական նյութեր և կազմակերպում է միջոցառումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ:

### *Աղյուսակ 17. Տվյալներ ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքների վերաբերյալ*

| Հաստատությունում գրանցված ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը տվյալ ուստարում | | | |
|---|---|---|---|
| Դեպքը | Ամսաթիվը | Դասարանը, սովորողը(ները) | Ձեռնարկված միջոցառումը |
| 1.Ալկոհոլի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքեր դպրոցում չեն գրանցվել, սակայն ձեռնարկվել են կանխարգելիչ միջոցառումներ | Ուստարվա ընթացքում | 10-12 | Ուստարվա ընթացքում իրականցվել են կանխարգելիչ զրույցներ և քննար-կումներ «Վնասակար սովորույթները և դրանց հետևանքները», «Ծխելը և առողջությունը», «Լավ եւ վատ սովորությունններ», «Առողջ ապրելա-կերպը դպրոցականների կյանքում», «Ծխախոտի և ալկոհոլի վնասները», «Սովորություններ, որ վտանգում են մեր առողջությունը՝ թմրանյութեր, ալկոհոլ, ծխախոտ, բամբասանք, ծաղր, անհարգալից վերաբերմունք»: «Ինչպես ձեռբազատվել վնասակար սովորույթներից» թեմայով կազմակերպվել է էլեկտրոնային նյութի դիտում և քննարկում: |
| 2.Դպրոցում գրանցվել են ծխախոտի օգտագործման դեպքեր | Ուստարվա ընթացքում | 10-12 | Ա.Տարվել են դեպքերի բացահայտման և կանխարգելման աշխատանքներ Բ. Ծխելը կանխելու բոլոր հնարավոր միջոցները քննարկվել են ծնողական ժողովների ժամանակ: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Գ. Իրականացվել են բացատրական աշխատանքներ զրույցների, քննարկումների ձևով: |

Ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումն կանխարգելելու ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրերը և միջոցառումները

| Ծրագիրը կամ միջոցառումը (նշել թեման) | Ամսաթիվը | Դասարանը |
|---|---|---|
| 1.Տարվել է աշխատանք թիրախային խմբի բացահայտման և դեպքերի կանխարգելման ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | 10-12 |
| 2.Դասղեկի ժամերին հոգեֆիզիկական դաստ. շրջանակում իրականացվել են զրույցներ հետևյալ թեմաներով.<br>«Վնասակար սովորույթները և դրանց հետևանքները»<br><br>«Առողջ ապրելակերպը դպրոցականների կյանքում»<br><br>«Ծխախոտի և ալկոհոլի վնասները»<br><br>«Սովորություններ, որ վտանգում են մեր առողջությունը՝ թմրանյութեր, ալկոհոլ, ծխախոտ, բամբասանք, ծաղր, անհարգալից վերաբերմունք» | 15.11.21թ – 19. 11.21թ<br><br>28.02.22թ -04.03.22թ.<br><br>14. 03.22թ -18.03.22թ<br><br>25.04.22թ. -29.05.22թ. | 10-12 |
| 3. ԱԽ-ի կողմից կազմակերպվել են քննարկումներ հետևյալ թեմաներով.<br>«Լավ և վատ սովորություններ»<br><br>«Ինչպես ձերբազատվել վնասակար սովորույթներից» թեմայով կազմակերպվել է էլեկտրոնային նյութի դիտում և քննարկում: | 22. 11. 21թ -26. 11. 21թ<br><br>Նոյեմբեր 2021 | ԱԽ<br><br>ԱԽ<br>10-րդ դասարաններ |
| 4.«Վնասակար սովորույթներ» թեմայով պատրաստվել են տեղեկատվական թերթիկներ | Նոյեմբեր 2021թ. | 10-11 |
| 5.Կազմակերպվել է հանդիպումներ ծնողների հետ, քննարկվել են դպրոցում գրանցված ծխախոտի օգտագործման դեպքերի դեմ կանխարգելման բոլոր հնարավոր միջոցները | Հունվար 2022թ.<br>Մարտ 2022թ. | 10-12 |
| 6. Դպրոցի բուժաշխատողի նախաձեռնությամբ սովորողների հետ կազմակերպվել է զրույց «Թմրանյութերի, արկոհոլի և ծխախոտի ազդեցությունը կյանքի որակի վրա» թեմայով | Փետրվար 2022թ. | 10 |
| 7. Ոստիկանության Մաշտոցի բաժնի ԱԳ և ԸԲԿ բաժանմունքի դպրոցական տեսուչ, ոստիկանության լեյտենանտ Ջանիկ Ստեփանյանը և դպրոցի տնօրենի՝ ՄԿԱ գծով տեղակալ Հ.Ասկիջյանը դպրոցի սովորողների շրջանում տարել են աշխատանքներ ծխելու դեպքերը բացահայտելու և թիրախային խմբի հետ բացատրական աշխատանքներ կատարելու ուղղությամբ | Ուստարվա ընթացք | 10-12 |

Դպրոցում գրանցված մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերը, դրանց բացահայտմանն ու

կանխարգելմանն ուղղված քայլերը

| Դեպքը | Ամսաթիվը | Դասարանը | Բացահայտմանն ու կանխմանն ուղղված քայլերը |
|---|---|---|---|
| - | - | - | - |

Դպրոցում սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմները

| Դեպքը | Ամսաթիվ | Դասարանը, սովորողը(ները) | Բացահայտման, քննարկման մեխանիզմը, ձեռնարկված քայլերը և կանխարգելման ուղիները |
|---|---|---|---|
| Չեն գրանցվել | | | |
| Չեն գրանցվել, սակայն իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ | - | - | |

երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումները և մեխանիզմները դպրոցում

| Միջոցառում | Ամսաթիվ | Մասնակիցները, դրանց թիվը | Առաջադրված մեխանիզմ |
|---|---|---|---|
| 1.Ծնողների ընդհանուր ժողով | Սեպտեմբերի 9-10 | 448 ծնող | Ծնողներն իրազեկվել են իրենց իրավունքների և պարտականությունների մասին |
| 2. Սեմինար | Հունվար 2022թ. | 380 ծնող | Կազմակերպվել են սեմինարներ. ա.«Երեխայի իրավունքների մասին», բ.«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքների իրազեկման նպատակով |
| 3.Կազմակերպվել են ծնողական խորհրդի հանդիպումներ | Ուստարվա ընթացքում | ծնողական խորհրդի 19 անդամ | Զրույց-քննարկումներ |
| 4. Ծնողական ժողովների անցկացում. ծնող-ուսուցիչ-սովորող հարաբերությունների քննարկում | Սեպտեմբեր Դեկտեմբեր 2021թ. Մարտ, հունիս 2022թ. | 448 ծնող | Կազմակերպվել են զրույցներ, բացահայտվել և քննարկվել են խնդիրները, առաջարկվել են լուծումներ |
| 5. Դասղեկների կողմից կազմակերպվել են զրույց-քննարկումներ. «Սովորողի իրավունքները և պարտականությունները» «Կոնֆլիկտային իրավիճակներն ու դրանց լուծման ուղիները» | 21.10.2021թ. 08.11.21թ -12.11.21թ. | Սովորող՝ 85 Սովորողներ՝ 410 | Ա. Ծանոթացնել սովորողներին իրենց իրավունքներին և պարտականություններին Բ. Կանխարգելել բռնության բոլոր հնարավոր ձևերը |

Դպրոցում կազմակերպված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով

| Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը | Ամսաթիվ | Դասարանը(ները) | Մասնակիցների թիվը |
|---|---|---|---|
| 1.Դասղեկի ժամերին անցկացվել են զրույցներ հետևյալ թեմաներով. «Սեռավարակներ, ի՞նչ է ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը», «ՄԻԱՎ-ի, ՁԻԱՀ-ի կանխարգելիչ միջոցները | 29.11.21թ -03.12.21թ.. | 10-12 | 420 |

| | | | |
|---|---|---|---|
| «Ինչպես պլանավորել առողջ ընտանիք»<br><br>«Առողջ ապրելակերպ», «Առողջ ընտանիքն առողջ և համերաշխ հասարակության հիմքն է» | 28.02.22թ -04.03.22թ<br><br>16.05.22թ -20.05.22թ | 10-12<br><br>10-11 | 420<br><br>320 |
| 2.ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշ-խարհային օրվա հետ կապված ԱԽ-ի կողմից կազմակերպվել է սեմինար «Ի՞նչ է ՄԻԱՎ-ը, ՁԻԱՀ-ը» թեմայով | 29.11.2021թ -03.12.21թ | ԱԽ | 36 |
| 3.«ՄԻԱՎ-ի, ՁԻԱՀ-ի կանխարգելման ուղիները. դասը վարում է դպրոցի բուժաշխատողը | 29.11.2021թ -03.12.21թ | 10 | 150 |
| 4.Իրականացվել է առողջ ապրելակերպի դասեր: | Փետրվար 2022թ | 10-11 | 320 |

Դպրոցում ստեղծված ուսումնամեթոդական նյութերը և կազմակերպած միջոցառումները՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ

| Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը | Ամսաթիվ | Դասարանը(ները) | Մասնակիցների թիվը |
|---|---|---|---|
| 1.Սովորողները ծանոթացել են դպրոցի ներքին կարգապահական կանոններին՝ իրենց իրավունքներին և պարտականություններին | Ուստարվա սկիզբ | 10 | 200 սովորող<br>7 դասղեկ |
| 2.Դասղեկի ժամերին բարոյաիրավական, մարդասիրական դաստիարակության շրջանակում անցկացրած զրույցներ, քննարկումներ<br>«Աշակերտի պահվածքը դպրոցում և այլ հասարակական վայրերում»<br>«Սովորողի իրավունքները և պարտականությունները»<br>«Կոնֆլիկտի կառավարում, հարգանք միմյանց նկատմամբ»<br>«Հաշմանդամությունը արգելք չէ»<br>«Խառնվածք և բնավորություն»<br>«Ի՞նչ է թրաֆիքինգը կամ մարդկանց վաճառքը, թրաֆիքինգի տեսակները» | 06.09.21թ - 10.09.21թ<br>.<br>19.10. 21թ.- 24. 10. 21թ.<br><br>08.11.21թ -12.11.21թ.<br><br>13.12.21թ -17.12.21թ.<br><br>31.01.22թ.-04.02.22թ<br>.<br>28.03.22թ -01.04.22թ. | 10-12 | 448 սովորող<br>17 դասղեկ |
| 3. Բանավեճ-քննարկում «Երեխաների իրավունքները» թեմայով /հասարակագիտության ուսուցչուհի/: | Հոկտեմբեր 2021թ. | 10 | 85 սովորող |
| 4.Քննարկում «Ոսկե կանոնով ապրելը և գործելը որպես մարդու վարքագծի կատարյալ սկզբունք»: | Փետրվար 2022թ. | 10 | 60 սովորող |

# Մաս 3

## Ուսումնական հաստատության գործունեության արդյունավետություն

*Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման կարևորագույն մասը ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության գնահատումն է: Կրթության որակը ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքն է, որը ներառում է.*

- *սովորողներին*, ովքեր առողջ են, պատրաստ սովորելու և մասնակցելու ուսումնառության գործընթացին՝ ստանալով իրենց ընտանիքների լիակատար աջակցությունը.
- *ուսումնական միջավայրը*, որը բարեկարգ է ու անվտանգ, ապահովում է առողջության պահպանումը, ինչպես նաև հագեցած է անհրաժեշտ ուսումնական գույքով և ռեսուրսներով.
- *կրթության բովանդակությունը*, որը սահմանված է կրթության չափորոշիչներով, առարկայական ծրագրերով, ուսումնական պլաններով ու արտացոլված ուսումնամեթոդական նյութերում և ուղղված է սովորողների մոտ հիմնարար գիտելիքների, կենսական հմտությունների և արժեքների ձևավորմանը,ներառյալ առողջության պահպանման, առողջ սնուցման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, գենդերային հավասարության և խաղաղության պահպանմանն ուղղված գիտելիքներն ու հմտությունները զարգացնելուն.
- *որակյալ ուսուցչական կազմը,* որն օգտագործում է աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ.
- հմուտ ղեկավարվող *ուսումնական գործընթացը* և արժանահավատ ու արդար *գնահատման համակարգը,* որը խթանում է սովորողների առաջադիմությունն ու նվազեցնում անհավասարությունները նրանց միջև.
- *ուսուցման վերջնարդյունքները*, որոնք ներառում են սովորողների գիտելիքները, հմտությունները, արժեքային համակարգն ու աշխարհայացքը և ուղղված են հասարակության մեջ սովորողների դրական մասնակցությանը:

### *3.1 Հաստատության սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշները*

Հաստատության սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշներից է սովորողների միջին տարեկան գնահատականները՝ ըստ կրթական աստիճանների: Այս ցուցանիշի հաշվարկի և դրան վերաբերող աղյուսակները լրացնելու համար կատարվել է դիտարկում-փաստագրում և դպրոցի վիճակագրական տվյալների վերլուծություն:

**Հաստատության սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշներից են.**

- գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների,
- ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների,
- ավարտման գործակիցը՝ ըստ կրթական աստիճանների,
- երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների,
- կրկնուսույցների մոտ պարապող սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների:
- միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ,
- ավարտական և միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ,
-հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական)և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը,
- նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունված 12-րդ դասարանի շրջանավարտների թիվը և տոկոսը,
- հիմնական դպրոցը ավարտած սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում,
- բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ,
- սովորողների բացակայությունների ընդհանուր թիվը ժամերով՝ ըստ կրթական աստիճանների,
*Նոր գույքի ձեռքբերման գծով տարեկան ծախսերի նվազումը պայմանավորված է սուբսիդիայի հաշվին գույքի գնման արգելքով:*

# *Մաս 4*

## *Ուսումնական հաստատությունում ներառական կրթության և հավասարության ապահովում*

Ներառական կրթությունը ենթադրում է ուսումնական հաստատություններում այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում, որոնցում բոլոր երեխաները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից, ունեն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ: Նման միջավայրը պետք է լինի երեխաներին ներառող, կրթություն ստանալու համար արդյունավետ, երեխաների նկատմամբ բարյացկամ, նրանց առողջության համար ապահով ու անվտանգ: Ներառումը ենթադրում է կրթության առավել լայն տեսլական, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ՝

- հաշմանդամություն ունեցող երեխաները.
- բռնության ենթարկվող երեխաները.
- աշխատող երեխաները.
- փախստական կամ տեղահանված երեխաները.
- միգրանտները.
- ծայրահեղ չքավորության մեջ ապրող երեխաները.
- լեզվական փոքրամասնությունները.
- ազգային փոքրամասնությունները.
- հակամարտությունների գոտիների երեխաները.
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և այլ հիվանդությունների հետևանքները կրող երեխաները և այլն:

Դպրոցում բոլոր երեխաների մոտ ձևավորվում են այնպիսի հմտություններ, վերաբերմունք և արժեհամակարգ, որոնք նրանց թույլ են տալիս իրենց լիովին դրսևորել և ինքնաիրացվել ոչ միայն դպրոցում սովորելու տարիներին, այլև հաստատությունն ավարտելուց հետո՝ չափահաս կյանքում:

Հավասարության սկզբունքը իր մեջ ներառում է տարբեր սեռերի, ազգային փոքրամասնությունների, սոցիալական տարբեր կարգավիճակի ընտանիքների երեխաների հավասարությունը:

Դպրոց ընդունվելու և դպրոցում սովորելու համար ստեղծված են հավասար պայմաններ բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական անապահովության աստիճանից, բացառությամբ հենաշարժողական խնդիրներ ունեցողների: Հաստատությունն ապահովում է բոլոր սովորողների հավասար մասնակցություն ուսումնառության գործընթացին՝ անկախ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական ապահովության աստիճանից: Հաստատությունն ապահովում է բոլոր սովորողների համար կրթության արդյունքներին հասնելու և առաջադիմության ցանկալի մակարդակը՝ նրանց կարիքներից, կարողություններից և սոցիալական ապահովության աստիճանից անկախ: Ուսումնական հաստատությունում սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունն ապահովված է:

*Աղյուսակ 28. Հաստատությունում ներառական կրթության իրականացմանը վերաբերող չափանիշներ*

| Չափանիշ | Այո | Ոչ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է ուսումնական հաստատության զարգացման ծրագրում | | Այո | |
| Ուսումնական հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ ուսուցիչների վերապատրաստումներ | | Այո | |
| Ուսումնական հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով օժտված տեղակալ (կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին). | | Այո | |
| Ուսումնական հաստատության վեր կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ | | Ոչ | |

| | | | |
|---|---|---|---|
| Ուսումնական հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր: | | Այո | |
| Վերջին 5 տարում տնօրենությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապատրաստման | | Ոչ | |
| Ուսումնական հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ: Վերջին 5 տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը: | | Այո<br>18 | |
| Ուսումնական հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն | | Ոչ | |
| Հաստատությունն ունի ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանա-մանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, ուսուցչի օգնական և այլն) | | Ոչ | |
| ԿԱՊԿ ունեցող սովորողներն ապահովված են դասագրքերով, գրենական պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով | | Այո | |
| Հաստատությունում առկա են ուսումնամեթոդական նութեր և սարքավորումներ՝ լսողության և տեսողության գործառույթի բացակայություն կամ սահմանափակում ունեցող աշակերտների համար | | Ոչ | |
| Ուսումնական հաստատության դասասենյակների դասավորվա-ծությունն այնպիսին է, որ ԿԱՊԿ ունեցող սովորողները մեկուսացված չեն | | Այո | |
| Ուսումնական հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար | | Ոչ | |
| Ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտները (թեքահարթակ, հենակ և այլն) | | Ոչ | |
| Ուսումնական հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները (վերաբերմունք, կարծրատիպ) | | Այո | |
| Անհատական ուսումնական պլանները մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները, առաջընթացը | | Այո | |
| Ուսուցիչների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ | | 36 | |
| Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր | | Այո | |
| Ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից | | Այո | |
| Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում և նույնիսկ սեփական վարքագծում | | Այո | |
| Ուսումնական հաստատությունն իրականացնում է սոցիալական աջակցության ծրագրեր սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար | | Այո | |
| ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված սովորողների նախաձեռնությունները | | Այո | |

*Աղյուսակ 29. Տվյալներ հաստատությունում ներառական կրթության իրականացման և հավասարության ապահովման խնդիրների վերաբերյալ*

| Ցուցանիշ | **2019-2020 ուստարի** | **2020-2021 ուստարի** | **2021-2022 ուստարի** |
|---|---|---|---|
| Սեռերի հավասարության գործակիցը (աղջիկ/տղա) | 197/152<br>1,3 | 170/224<br>0,8 | 259/189<br>1,4 |
| Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը (ա/տ) | 27/5<br>5.4 | 29/6<br>4.8 | 32/6<br>5,3 |
| Գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող տղաների թվի հարաբերությունը գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող աղջիկների թվին | 4/35<br>0,1 | 4/42<br>0,1 | 5/31<br>0,2 |
| Տարեկան անբավարար գնահատական (գնահատականներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական (գնահատականներ) ունեցող աղջիկների թվին | 3/0 | 0/1 | 16/2 |
| Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով) | | 11/10<br>1,1 | 59,9/57,9<br>1,0 |
| «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաներից տղաների և աղջիկների տարեկան միջին առաջադիմությունը | Տղաներ<br>6,2<br>Աղջիկներ<br>7,6 | Տղաներ<br>6,1<br>Աղջիկներ<br>7,6 | Տղաներ<br>6,0<br>Աղջիկներ<br>7,5 |
| Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը | - | - | - |
| Աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը | - | - | - |
| Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների միջին տարեկան առաջադիմությունը | - | - | - |
| Անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը | 37/10.5% | 41/10.3% | 47/10.4% |
| Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը | - | - | - |
| Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերի թիվը տվյալ ուստարում | - | - | - |
| Հաստատության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի թիվը | - | - | - |

# Մաս 5

## Համայնքային մասնակցություն

***Ուսումնական հաստատությունում սովորողների և տնօրինության համագործակցությունը, սովորողների մասնակցությունը մասնակցության գործունեությանը.***

Ծնողների, մանկավարժների և համայնքների համագործակցությունը լավագույն միջոցն է արդյունավետ կերպով աջակցելու սովորողներին՝ ուսման մեջ և կյանքում հաջողությունների հասնելու:

Ծնողների, ընտանիքի և համայնքի մասնակցությունը ուսումնական հաստատության գործունեության բարելավման կարևոր գործոն է:

Կարևոր է ծնողների մշտական կապը ուսումնական հաստատության հետ, ծնողական ժողովներին կանոնավոր մասնակցությունը՝ երեխայի հաճախումների, առաջադիմության, հաջողությունների և խնդիրների վերաբերյալ տեղեկացված լինելու և նրանց աջակցելու համար:

Ծնողների, ընտանիքների, և համայնքների մասնակցության միջազգայնորեն տարանջատված 6 ձևերն էլ (1. ծնողական և ընտանեկան խնամքը, ուշադրությունը և հոգածությունը երեխայի հանդեպ, 2. ծնողների, ընտանիքի և համայնքի մշտական հաղորդակցությունը ուսումնական հաստատության հետ, 3. ծնողների, ընտանիքի և համայնքի կամավորական բնույթի գործունեությունը՝ ուղղված ուսումնական հաստատությանն օժանդակելուն, 4. աջակցությունը երեխային իր տնային աշխատանքների կատարման մեջ և սովորելու գործընթացում, 5. ծնողների, ընտանիքի և համայնքի ներգրավվածությունը ուսումնական հաստատության կողմից որոշումների կայացման գործընթացում, 6. ուսումնական հաստատության համագործակցությունը տեղական իշխանությունների և համայնքների հետ) գործում են մեզանում ավել կամ պակաս չափով:

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում ներառված են դպրոցի սովորողների ծնողները, մանկավարժները, տարածքային կառավարման մարմնի, նախարարության և տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչները: Դպրոցի կառավարմանը մասնակցում են ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Մասնակցության բարձրացման նպատակով դպրոցն իրականացնում է քայլեր, որոնք ուղղված են դպրոցի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև տարբեր համայնքային կառույցների հետ համագործակցության ամրապնդմանը: Դպրոցը գործուն մասնակցություն է ունենում համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ այդ գործընթացում ներգրավելով նաև սովորողներին:
Դպրոցում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան ԱԽ, ԾԽ, որոնք համագործակցում են տնօրինության, ՄԽ-ի հետ, աջակցում սովորողների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Դպրոցի գործունեության ներքին գնահատման գործընթացի միջոցով սովորող-ծնող-հաստատություն-համայնք համագործակցության արդյունավետության, կրթության որակի բարձրացմանը գործում դրա նպաստման աստիճանը բացահայտելու նպատակով իրականացվել է փաստաթղթային ուսումնասիրում, փաստագրում, դիտարկում և հարցում:

***Ուսումնական հաստատությունում սովորողների և տնօրինության համագործակցության, հաստատության գործունեությանը սովորողների մասնակցության ցուցանիշներն են.***

- տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը.
- սովորողների մասնակցությունն իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ տնօրինության կողմից որոշումների ընդունմանը, նման դեպքերի թիվը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
- սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և դրանց թիվը, նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
- սովորողների կողմից կազմակերպած միջոցառումները և դրանց թիվը, միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
- սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը, մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը

- իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները, դրանց թիվը, և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.
- սովորող-սովորող և սովորող-ուսուցիչ հարաբերությունները ուսումնական հաստատությունում:

**Աղյուսակ 30. Տվյալներ հաստատության գործունեությանը սովորողների մասնակցության վերաբերյալ**

| Ցուցանիշ | 2019-2020 ուստարի | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի |
|---|---|---|---|
| Դեպքերի թիվը, երբ սովորողները մասնակցություն են ունեցել իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ տնօրինության կողմից որոշումների կայացմանը | 4 | 4 | 4 |
| Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը | 11 | 8 | 11 |
| Սովորողների կողմից կազմակերպած միջոցառումների թիվը | 12 | 11 | 15 |
| Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողի, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը | 9 | 6 | 13 |
| Նկարագրել, թե ինչպես է տնօրինությունը խթանում սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը | | | |
| Տնօրինությունը մեծ նշանակություն է տալիս սովորողների ինքնավար գործունեությանը, լսում է, համատեղ քննարկում սովորողների ներկայացրած առաջարկությունները, նրանց հուզող հարցերը և ներառում տվյալ ուսումնական տարվա աշխատանքային ծրագրում:<br>ԱԽ նախագահը և անդամները տնօրենին, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալին, ուսումնական աշխատանքի գծով տեղակալներին, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչին ներկայացնում են իրենց նախաձեռնությունները, ծրագրերը և ծրագրերի նպատակները: Տնօրինությունը խթանում, օժանդակում և աջակցում է այդ նախաձեռնությունների իրականացմանը, համակարգում ծրագրերի իրականացումը՝ ներգրավվելով համապատասխան մասնագետ ուսուցիչների, հրավիրելով այլ մասնագետների, տրամադրում է տարածք, դիտակտիկ նյութեր և տեխնիկա, օգնում դառնալ արհեստավարժ, արդյունավետ կազմակերպել աշխատանքը: | | | |
| Սովորողների մասնակցությունը իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ: Տնօրինության կողմից ընդունած որոշումներին և դրանց կայացմանը մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը | | | |

| Նկարագրել վերջին 3 տարում քննարկված խնդրահարույց հարցերը և ընդունված որոշումները | Ամսաթիվ | Մասնակից սովորողների %-ը՝ սովորողների ընդ. թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| 1.Դպրոցում գրանցված ծխելու դեպքերի դեմ կանխարգելման միջոցառումների կազմակերպում | Նոյեմբերի 13 2019թ.<br>Նոյեմբեր, ապրիլ 2020թ.<br>Նոյեմբեր 2021 | 10%<br>12%<br>13% | ԱԽ-ում քննարկվել է սովորողների առողջությանն ուղղված միջոցառումների ցանկ, որի իրականացման գործում աջակցել են տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալը, դասղեկները և դպրոցի բուժաշխատողը: |
| 2. Դասամիջոցներին սովորողների կողմից հերթապահության կազմակերպում | Ուս. ուստարվա ընթացք | 20% | Նպատակը եղել է դպրոցի ներքին կարգապահությանը աջակցելը: |
| 3.Սովորողների ուսումնական առաջընթացի բարելավմանն ուղղված աշխատանքների կազմակերպում: | 15.01.2020<br>12.01.2021<br>14.01.2022 | 13%<br>14%<br>13% | Առաջարկեց դասարաններում բարձր առաջադիմություն ունեցող սովորողներից ստեղծել փոքրիկ խմբեր և ուսման մեջ ետ մնացող սովորեղներին տալ ուսումնական օգնություն: |
| 4.Նախաձեռնել միջոցառումներ ԱԽ-ի տարեկան և դպրոցի ուսումնադաստիարակչական պլանից դուրս | Ուս. ուստարվա ընթացք | 10% | Տնօրինությունը խթանում է սովորողների նախաձեռնու-թյունները, օժանդակում դրանց իրագործմանը: |

| Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և նախաձեռնություններին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը | | | |
|---|---|---|---|
| Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները | Ամսաթիվ | Մասնակից սովորողների %-ը սովորողների ընդհ. թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
| 1. Սովորողների կարգապահության բարձրացման նպատակով որոշում է ընդունվել դպրոցի ԱԽ-ում ձևավորել ուսումնադաստիարակչական հանձնախումբ | Յուրաքանչյուր ուստարի | 10% | Կազմակերպվել է աշակերտական հերթապահություն, ճշտվել է անհարգելի բացակայող համադասարանցու բացակայության պատճառը, ցուցաբերվել է աջակցություն ուսման մեջ խնդիրներ ունեցող սովորողին: Նախաձեռնությունը դարձել է ամենամյա: |
| 2. Սովորողները նախաձեռնել են դպրոցի ամանորյա ձևավորում:<br><br>Դպրոցի համար ձեռք է բերվել նոր տոնածառ: | 2019-2020<br><br>2021 դեկտեմբեր | 80% | Նախաձեռնությունը դարձել է ամենամյա: Մասնակցել են դպրոցի բոլոր դասարանները․ ձևավորվել են բոլոր դասասենյակները, նկարազարդվել են դպրոցի մուտքի դռները, դպրոցի միջանցքում տեղադրվել է ամանորյա տոնածառը:<br>2021-ին դպրոցի տոնածառը սովորողների նախաձեռնությամբ փոխարինվել է նորով: |
| 3. Սովորողները նախաձեռնել և կազմակերպել են ամանորյա ժամանց-միջոցառումներ: | 2019 դեկտեմբեր<br>2021 դեկտեմբեր | 80%<br>75% | Նախաձեռնությունը դարձել է ամենամյա: Ժամանց միջոցառումները իրականացվել են դասղեկների և ծնողների աջակցությամբ: |
| 4. 12-րդ դասարանների մի խումբ սովորողներ նախաձեռնել են համագործակցություն 10-րդ դասարանների սովորողների և անգլերենի ուսուցիչների հետ ուսումնական գործընթացը առավել արդյունավետ դարձնելու նպատակով․ կազմել են հաստատուն կամ փոփոխական կազմով զույգեր ամբողջ կիսամյակի ընթացքում և օգնել 10-րդցիներին՝ լուծելու իրենց ուսումնական խնդիրները՝ միաժամանակ լուծելով ավագ դպրոցի ուսումնական նյութը կրկնելու իրենց խնդիրը: | 2019-2020 հունվար-փետրվար | 15% | Այս համագործակցությունը նպաստում է սովորողների համագործակցային հմտությունների ձևավորմանը և զարգացմանը, կրթության որակի բարձրացմանը: Եղել են առաջարկներ հաջորդ ուսումնական տարում ընդլայնել այսպիսի ուսումնական գործընթացով յուրացվող ուսումնական առարկաների ցանկը: |
| 5. Համագործակցություն ՀՊՏՀ-ի ՈւԽ-ի հետ | 15.10.2019թ. | 8% | Աջակցել է տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալը և ԱԽ-ը |
| 6.Նախաձեռնվել է կրթական ճանաչողական այց Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա | 18.10.2019թ. | | Աջակցել է տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալը |
| 7.Թումանյանի տուն-թանգարանում կազմակերպվել է «Թումանյանի հետ» վերնագրով պոեզիայի ժամ՝ նվիրված ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150- ամյակին | 21.10.2019թ. | 10% | Նախաձեռնել են 10-րդ և 11-րդ բնագիտական դասարանների սովորողները հայոց լեզվի և գրականության ուսուցչի հետ |
| 8.Համագործակցություն ՀՄԸՄ-ՀԱՄԿ խմբապետական խորհրդի հետ | 15.11.2019թ. | 12% | Նախաձեռնության հեղինակը դպրոցի ԱԽ է |

| | | | |
|---|---|---|---|
| 9.Համագործակցություն «Smile project»-ի հետ | 20.11.2019թ. | 10% | Նախաձեռնության հեղինակը դպրոցի ԱԽ է |
| 10.Նախաձեռնել և կազմակերպել են բանավեճ «Ամուլսարի ոսկու հանքի շահագործում» թեմայով | 22.11.2019թ. | 4% | 11-րդ ֆիզմաթ/տնտեսագիտական դասարանի սովորողները համագործակցել են աշխարհա-գրության ուսուցչուհու հետ: |
| 11. Նախաձեռնել և կազմակերպել են կոնֆերանս «Գլոբալ տաքացում» թեմայով | 28.11.2019թ. | 08% | Նախաձեռնել են բնագիտական ենթահոսքի սովորողները: |
| 12.ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված կազմակերպել դաս-քննարկում | Դեկտեմբեր 2019թ. | 30% | Աջակցել է դպրոցի բուժաշխատողը և կենսաբանության ուսուցիչը: |
| 13.Խաղ-վարժանք թրեյնինգ «Կյանքի հմտություններ» թեմայով | 14.02.2020թ. | 12% | Նախաձեռնության հեղինակը ԱԽ-ի արտաքին հարաբերու-թյունների մասնագիտացված հանձնախումբն է: |
| 14.Կազմակերպվել է այցելություն ՀՀ Կենտրոնական բանկի դրամի պատմության թանգարան | 24.02.2020թ. | 7% | |
| 15. 44-օրյա պատերազմի ժամանակ նախաձեռնել և կազմակերպել են օգնություն հայոց բանակին | հոկտեմբեր-նոյեմբեր 2020թ. | 90% | Պատրաստել են քողարկիչ ցանցեր, առաջին անհրաժեշ-տության իրերով արկղիկներ: |
| 16. Նախաձեռնվել և կազմակերպվել է կլոր- սեղան քննարկում «Առողջ ապրելակերպ» թեմայով | 10.02.2021թ. | 5% | Սովորողներին աջակցել է կենսաբանության ուսուցիչը |
| 17. Նախաձեռնվել և կազմակերպվել է սեմինար-քննարկում «Մասնագիտական կրթություն ստանալու հնարավորու-թյունները ՀՀ-ում և արտերկրում» | 17.02.2021թ. | 10% | Նպատակը սովորողներին տալ մասնագիտական ճիշտ կողմնորոշում |
| 18. Նախաձեռնվել և կազմակերպվել է քննարկում «Քրիստոնեական առաքի-նություններ և մոլություններ» թեմայով | 10.03.2021թ. | 12% | Սովորողներին աջակցել է ՀԵՊ-ի ուսուցիչը |
| 19. Նախաձեռնվել և կազմակերպվել է բանավեճ «Ֆեմինիզմ» թեմայով | 16.04.2021թ. | 5% | Նպակատը ևս մեկ անգամ սեռերի հավասարության կարևորությանը անդրադառնալն էր |
| 20.Նախաձեռնվել և կազմակերպվել է ֆուտզալի հուշամրցաշար | Ապրիլ-մայիս 2021թ. | 8% | Սով-ին աջակցել են ֆիզկուլտուրայի ուսուցիչները |
| 21. Նախաձեռնվել և կազմակերպվել է «SARS-CoV-2 կորոնավիրուս» թեմայով տեղեկատվական դաս-քննարկում | Մայիս 2021թ. | 20% | Նպատակը սով-ին «SARS-CoV-2 կորոնավիրուս»-ի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ հաղորդելն է: Սով-ին աջակցել է կենսաբանության ուսուցիչը |
| 22.Նախաձեռնվել և կազմակերպվել է այցելություն Եռաբլուր | Մայիս 2021թ. | 10% | |
| 23.Նախաձեռնվել և կազմակերպվել է սեմինար «Մեդիագրագիտություն» թեմայով | 10.11.2021թ. | 33% | Սով-ին աջակցել են հասարակագիտության, անգլերենի և ինֆորմատիկայի ուսուցիչները |
| 24.Նախաձեռնվել և կազմակերպել է զրույց-քննարկումներ «Ժառանգական հիվանդություններ» թեմայով | Նոյեմբեր 2021թ | 12% | Սովորողներին աջակցել է կենսաբանության ուսուցիչ Ս. Զաքարյանը |
| 25.12-րդ բնագիտական դասարանի և Ախ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել է դիսկուս դաս-քննարկում «Բնությունը դատապարտում է» թեմայով: | 09.12.2021թ. | 14% | Սով-ին աջակցել է քիմիայի ուսուցիչ Ա. Խաչիկյանը |
| 26.Նախաձեռնվել և կազմակերպվել է հան-գանակություն 44-օրյա պատերազմում զոհված դպրոցի տղաների հիշատակին հուշաքար կանգնեցնելու | Հունվար-փետրվար 2022թ. | 80% | Հուշաքարի բացման արարողությունը տեղի ունեցավ մայիսի 26-ին |

| | | | |
|---|---|---|---|
| նպատակով | | | |
| 27.Նախաձեռնվել և կազմակերպվել է վիկտորինա՝ «Զարմանահրաշ հայոց լեզու» խորագրով | 21.02.2022թ. | 5% | Սով-ին աջակցել են հայոց լեզվի ուսուցիչներ Գ. Հովհաննիսյանը և Մ. Հովհաննիսյանը |
| 28.Նախաձեռնվել և կազմակերպվել է սեմինար-քննարկում «Անձի առանձնա-հատկությունը և մասնագիտության ընտրությունը» թեմայով | 22.02.2022թ. | 9% | Նպաստել մասնագիտական կողմնորոշմանը |
| 29.Կազմակերպվել է այցելություն ցուցահանդես-պատկերասրահ. Արցախի պատմական և արդեն կորցրած տեսարժան վայրեր | 13.03.2022թ. | 5% | Նպատակը մշակութային ժառանգության պահպանումն էր |
| 30.Նախաձեռնվել և կազմակերպվել է սեմինար քննարկում «Էկոլոգիական հիմնախնդիրները Հայաստանում» թեմայով | 18.03.2022թ. | 9% | Համագործակցություն դպրոցի տարբեր հոսքերի միջև |
| 31.Չարենցի ստեղծագործության հիման վրա կազմակերպել էր գրքի շնորհանդեսը: | 14.04.2022թ. | | Սով-ին աջակցել է գրականու-թյան ուսուցիչ Մ. Բերբերյանը |

Սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները և միջոցառումներին մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը.

| Նկարագրել վերջին 3 տարում սովորողների կողմից կազմակերպված միջոցառումները | Ամսաթիվ | Մասնակից սովորողների %՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Համադպրոցական կամ դասարանային |
|---|---|---|---|
| 1.Կազմակերպվել են ուսուցչի օրվան նվիրված միջոցառումներ, ուսուցիչների համդիսավոր ընդունելություն | 04.10.19թ. | 10% | համադպրոցական |
| 2. Սովորողները նախաձեռնել են դպրոցի ներքին և արտաքին տեսքի բարեկարգման աշխատանքներ /դպրոցի շրջակայքի մաքրում, ծառատունկ, վարդի թփերի տնկում, ձնամաքրման աշխատանքներ/ | Յուր. ուստարվա աշուն-գարուն | 60% | համադպրոցական |
| 3. Կազմակերպվել են սպորտային մրցումներ | Յուր. ուստարվա ընթացքում | 60% | միջդասարանային համադպրոցական |
| 4. Կազմակերպվել են Կանանց միջազգային օրվան նվիրված ուսուցիչների հանդիսավոր ընդունելություն, տոնախմբություն | Յուր. ուստարվա մարտ | 70% | համադպրոցական |
| 5. Կազմակերպվել են այցելություններ պատկերասրահներ, թատրոններ | Յուր. ուստարվա ընթացքում | 50% | համադպրոցական դասարանային |
| 6.Կազմակերպվել են կոլեկտիվ կինոդիտումներ | Յուր. ուստարվա ընթացքում | 70% | դասարանային |
| 7.Կազմակերպվել են հայրենագիտական ճամփորդություններ | Յուր. ուստարվա ընթացքում | 70% | դասարանային |
| 8.Կազմակերպվել են բնապահպանական միջոցառումներ | Յուր ուստարվա ընթացքում | 80% | համադպրոցական |
| 9. Կազմակերպվել են Հայոց բանակի կազմավորմանը նվիրված միջոցառումներ | 27.01.2020թ.<br>27.01-29.01. 2021թ. | 4%<br>80% | համադպրոցական |
| 10. Կազմակերպվել է ամանորյա տոնախմբություն | 20.12.2019թ.<br>Դեկտեմբեր | 65% | համադպրոցական |

| | | | |
|---|---|---|---|
| | 2021թ. | | |
| 11. Կազմակերպվել է այցելությունը Երևանի Երկրաբանության թանգարան | 06.02.2020թ. | 5% | դասարանային |
| 12. Կազմակերպվել է այցելությունը ԵՊՀ-ի թանգարան | 18.02.2020թ. | 8.5% | դասարանային |
| 13. 44-օրյա պատերազմի ժամանակ կազմակերպել են օգնություն հայոց բանակին | հոկտեմբեր-նոյեմբեր 2020թ. | 90% | համադպրոցական |
| 14.Այցելություն Ցեղասպանության զոհերի հուշահամալիր և Ցեղասպանության թանգարան: | Ապրիլ 2021թ. | 35% | դասարանական |
| 15. Կազմակերպվել է բանավեճ «Ֆեմինիզմ» թեմայով | 16.04.2021թ. | 5% | 10-11-րդ դասարաններ |
| 16. Կազմակերպվել է ֆուտզալի հուշամրցաշար | Ապրիլ-մայիս 2021թ. | 8% | համադպրոցական |
| 17.Այցելություն «Վտանգված ժառանգություն. Արցախ» խորագրով ցուցահանդեսին | Մայիս 2021թ. | 10% | դասարանական |
| 18. Կազմակերպվել է այցելություն Եռաբլուր | Մայիս 2021թ. | 10% | դասարանական |
| Կազմակերպվել է այց Խուլ-համրերի մշակույթի տուն | 15.10.2021թ. | 5% | դասարանական |
| 19.Կազմակերպել է այցելություն «Ալ. Սպենդիարյանի» տուն թանգարան» | 22.12.2021թ. | 10% | դասարանական |
| 20.Կազմակերպվել է հրաձգության մրցումներ | 31.01.-02.02 01.04.2022թ. | 11% | համադպրոցական |
| 21.Կազմակերպվել է հանդիպում ապրիլյան քառօրյա պատերազմի և 44-օրյա պատերազի մասնակից, դպրոցի շրջանավարտ Հ. Սարկիսովի հետ | 03.02.2022թ. | 11% | 10-11-րդ դասարաններ |
| 22.Կազմակերպվել է «Լիտերատուսի արկածները» խաղ-մրցույթ: | Մարտ 2022թ. | 20% | 10-րդ դսարաններ |
| 23.Կազմակերպվել է այցելություն Եղեռնի զոհերի հուշահամալիր | 23.04-28.04 2022թ. | 50% | համադպրոցական |
| 24.Մասնակցություն <<Թանգարանների գիշեր>> միջոցառմանը | 21.05.2022թ. | 30% | դասարանական |

Սովորողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը

Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները և մասնակցություն ունեցած սովորողների %

| Թվարկել վերջին 3 տարում սովորող-ների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները, նշել դրանց թեմաները | Ամսաթիվ | Մասնակից սովորողների %՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| 1. Կազմակերպվել է սովորողների ընդհանուր ժողով, որտեղ քննարկվել է սովորողների ինքնավարության գործադիր մարմին՝ ԱԽ ձևավորելու հարցը | 05.09.19թ.<br>22.09.20թ.<br>06.09.2021թ. | 17%<br>15%<br>13% | Սովորողներին աջակցել է տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալը և դաստիա-րակչական աշխատանք-ների կազմակերպիչը |
| 2. Ուստարվա ավարտին հրավիրվել է սովորողների ընդհանուր ժողով, որտեղ ԱԽ-ի նախագահը ներկայացրել է ուստարվա ընթացքում ԱԽ-ի կատարած աշխատանքները | 22.05.19թ.<br>26.05.21թ.<br>27.05.22թ. | 14%<br>15%<br>13% | Դպրոցի սովորողների կողմից ԱԽ-ի կատարած աշխատանքներին տրվել է գնահատական |
| 3. Կազմակերպվել է «Կրթություն և | Յուր. ուստարվա | 15% | Ծրագիրը իրականացվել է |

| | | | |
|---|---|---|---|
| կարիերա» թեմայով քննարկում | մարտ-ապրիլ | | տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալի և դասղեկների աջակցությամբ |
| 4.Կազմակերպվել են քննարկումներ սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ հարաբերությունների շուրջ | Ուստարվա ընթացքում | 85% | Քննարկումները իրակա-նացել են դասարաններում ՝ դասղեկի անմիջական մասնակցությամբ: |
| 5.Կազմակերպվել է սեմինար «Ինչպես պատրաստել գրագետ CV» թեմայով | 15.10.19թ. | 12% | Համագործակցել են ՀՊՏՀ-ի ՈւԽ-ի հետ |
| 6.Կազմակերպվել է սեմինար «Ինչպես դառնալ առաջնորդ 21-րդ դարում» թեմայով | 15.11.19թ | 8% | Համագործակցել են ՀՄԸՄ-ՀԱՍԿ խմբապետական խորհրդի ծրագրերի պատասխանատուի հետ |
| 7.Կազմակերպվել է սեմինար «Ինչպե՞ս տպավորել մարդկանց» թեմայով | 20.11.19թ. | 10% | Սեմինարը վարել է «Smile project»-ի համահիմնադիր, Education USA-ի մրցունակ աշակերտ Գրիգորի Արտազյանը |
| 8.Կազմակերպեվել է բանավեճ «Ամուլսարի ոսկու հանքի շահագործում» թեմայով | 22.11.2019թ. | 4% | Սովորողները համագործակցել են աշխարհագրության ուսուցչի հետ |
| 9.Կազմակերպվել է կոնֆերանս «Գլոբալ տաքացում» թեմայով | 28.11.19թ. | 8% | |
| 10. Կազմակերպվել է «ՄԻԱՎ, ՁԻԱՀ» թեմայով դաս-քննարկում | 02.12.19թ.-06.12.19թ. | 30% | Քննարկումները նպաս-տում են սովորողների ֆիզիկական, սեռական դաստիարակությանը զարգացմանը |
| 11. Կազմակերպվել է խաղ-վարժանք թրեյնինգ «Կյանքի հմտություններ, ինչպես լինել ակտիվ լսող» թեմայով | 14.02.20թ. | 6% | Նպատակը սովորողների մեջ կյանքի հմտություններ ձևավորելն ու զարգացնելն է |
| 12. Կազմակերպվել է հեռավար սեմինար «Ի՞նչ է ՄԻԱՎ-ը, ՁԻԱՀ-ը» | 01.12.2020թ. | 8% | Քննարկումները նպաստում են սովորողների ֆիզիկա-կան, սեռական դաստիարա-կությանը զարգացմանը |
| 13. Փետրվարին 10-րդ դասա-րաններում կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում «Առողջ ապրելակերպ» թեմայով | 10.02.2021թ. | 5% | Սովորողներին աջակցել է կենսաբանության ուսուցիչը |
| 14. Կազմակերպվել է սեմինար-քննարկում «Մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունները ՀՀ-ում և արտերկրում» | 17.02.2021թ. | 10% | Նպատակը սովորողներին տալ մասնագիտական ճիշտ կողմնորոշում |
| 16. Կազմակերպվել է քննարկում «Քրիստոնեական առաքինություն-ներ և մոլություններ» թեմայով | 10.03.2021թ. | 12% | Սովորողներին աջակցել է ՀԵՊ-ի ուսուցիչը |
| 17. Կազմակերպվել է բանավեճ «Ֆեմինիզմ» թեմայով | 16.04.2021թ. | 5% | Նպակատը ևս մեկ անգամ սեռերի հավասարության կարևորությանը անդրադառնալն էր |
| 18. Կազմակերպվել է «SARS-CoV-2 կորոնավիրուս» թեմայով տեղեկատվական դաս-քննարկում | Մայիս 2021թ. | 20% | Նպատակը սով-ին «SARS-CoV-2 կորոնավիրուս»-ի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ հաղորդելն է: Սով-ին աջակցել է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կենսաբանության ուսուցիչը |
| 19.Կազմակերպել բանավեճ «Ինչ տվեց անկախությունը մեզ›› թեմայով | 20.09-24.09 2022թ, | 15% | Սով-ին աջակցել են պատմության ուսուցիչները |
| 20.Կազմակերպվել է քննարկում «Սովորողների իրավունքներն ու պարտականությունները» թեմայով | 18.10- 22.10 2021թ. | 70% | Սով-ին աջակցել են ՄԿԱ գծով տնօրենի տեղակալը և դասղեկները |
| 21. Կազմակերպվել է սեմինար «Մեդիագրագիտություն» թեմայով | 10.11.2021թ. | 33% | Սով-ին աջակցել են հասարակագիտության, անգլերենի և ինֆորմա-տիկայի ուսուցիչները |
| 22. Կազմակերպել են զրույց-քննարկումներ ‹‹Ժառանգական հիվանդություններ›› թեմայով | Նոյեմբեր 2021թ | 12% | Սովորողներին աջակցել է կենսաբանության ուսուցիչ Ս. Զաքարյանը |
| 13.«Ի՞նչ է ՄԻԱՎ-ը, ՁԻԱՀ-ը» | 29.11.2021թ. | 15% | Սով-ին աջակցել է դպրոցի բուժաշխատողը |
| 14.Կազմակերպվել է ‹‹SARS-CoV-2 կորոնավիրուս›› թեմայով սեմինար | Դեկտեմբեր 2021թ. | 30% | Սով-ին աջակցել է կենսաբանության ուսուցիչը |
| 15. Կազմակերպվել է դիսկուս դաս-քննարկում «Բնությունը դատա-պարտում է» թեմայով: | 09.12.2021թ. | 14% | Սով-ին աջակցել է քիմիայի ուսուցիչ Ա. Խաչիկյանը |
| 16. Կազմակերպվել է սեմինար-քննարկում «Անձի առանձնահատ-կությունը և մասնագիտության ընտրությունը» թեմայով | 22.02.2022թ. | 9% | Նպաստել մասնագիտական կողմնորոշմանը |
| 17.Կազմակերպվել է ՀՀ Սահմա-նադրության քննարկում | Մարտ 2022թ. | 18% | Սով-ին աջակցել է հասարակագիտության ուսուցիչը |
| 18. Կազմակերպվել է սեմինար քննարկում «Էկոլոգիական հիմնախնդիրները Հայաստանում» թեմայով | 18.03.2022թ. | 9% | Համագործակցություն դպրոցի տարբեր հոսքերի միջև |
| 19.Կազմակերպվել է քննարկում «Սովորող-ուսուցիչ» թեմայով | 12.04.2022թ. | 8% | |

| |
|---|
| Նկարագրել սովորող - սովորող և սովորող - ուսուցիչ հարաբերություններն ուսումնական հաստատությունում |
| Սովորող - սովորող հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի, հանդուրժողականության, ժողովրդավարության և հավասարության սկզբունքների վրա: Դպրոցում ուսումնական գործընթացը կազմակերպվում է համագործակցային այնպիսի մանկավարժական տեխնոլոգիաներով, որոնք նրանց մեջ ձևավորում են միմյանց հետ աշխատելու, միմյանցից սովորելու և սովորել սովորեցնելու կարողություններ: Նրանց հարաբերություններում դրսևորվում է հոգատարություն, ընկերասիրություն և փոխօգնություն: Պարբերաբար տարվող զրույցները, քննարկումները և բանավեճերը օգնում են սովորողներին զերծ մնալ կոնֆլիկտներից, լուծել կոնֆլիկտային իրավիճակները, լինել ավելի բարյացակամ, հարգալից և հանդուրժող: Սովորող - ուսուցիչ հարաբերությունները համագործակցային-գործընկերային են, ներդաշնակ, հիմնված փոխադարձ հարգանքի վրա: Սովորողները դպրոցում ոչ միայն ուսումնական գործընթացի մասնակիցներ են, այլև ուսուցիչների հետ մասնակցում են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, կայացնում են համատեղ որոշումներ, պլանավորվում տարբեր աշխատանքներ: Սովորողներն ազատ են կարծիքների արտահայտման մեջ: |

Դպրոցում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները: Դպրոցի աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք:

**Աղյուսակ 31. Տվյալներ հաստատության աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ**

| Ցուցանիշ | | | |
|---|---|---|---|
| Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն. | | | |
| Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած քայլերն ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցելուն. | Ամսաթիվ | Աջակցություն ստացած սովորողների թիվը և %-ը՝ սովորողների ընդհ. թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
| 1. Սովորողների ուսումնադաստիարակ-չական աշխատանքներին աջակցելու նպատակով ԱԽ-ի 1-ին նիստի որոշմամբ ձևավորվել է ուսումնադաստիրակչական մասնագիտացված հանձնախումբ:<br>Ուսումնադաստիարակչական հանձնա-խումբը կատարել է հետևյալ աշխատանքները.<br>ա. Քառորդային և կիսամյակային ամփոփումների ժամանակ բացահայտել է չառաջադիմող սովորողներին և պարզել հետ մնալու պատճառները,<br>բ. Ձեռնարկել է միջոցներ հետ մնացող սովորողների ուսման որակը բարձրացնելու համար: | 03.10.19թ.<br><br>13.10.20թ.<br><br>02.10.21թ. | 64 / 19.6%<br><br>56 / 16%<br><br>57 / 13% | ԱԽ-ը համագործակցել է տնօրենի տեղակալների և դասղեկների հետ: |
| 2. ԱԽ-ի կողմից իրականացվել են միջոցառումներ սովորողների անհարգելի բացայակությունների նվազեցման ուղղությամբ.<br>Դասարանական աշակերտական խոր-հուրդները համագործակցել են դասղեկների հետ և համատեղ կատարել հետևյալ միջոցառումները.<br>ա/ ճշտել են անհարգելի բացակայող համադասարանցու բացակայության պատճառը,<br>բ/խոսել են ծնողի հետ,<br>գ/խոսել են սովորողի հետ, փորձելով գտնել բացակայության պատճառը: | Ցուր. ուստարվա ընթացքում | Միջինը<br>10% | ԱԽ-ը համագործակցել է տնօրենի տեղակալների և դասղեկների հետ: |
| 3. Դպրոցում կարգապահական խնդիրներ առաջացնող սովորողներին վերահսկելու նպատակով համատեղ կազմակերպել է աշակերտական և ուսուցչական հերթապահություն: | 03.10.19թ.<br>13.10.20թ.<br>01.10.21թ. | 2.2%<br>2.5%<br>2.3% | ԱԽ-ն աջակցություն է ստացել տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալի կողմից: |
| 4. Աջակցել տնօրինությանը դժվար դաստիարակվող սովորողների հետ տարվող աշխատանքներում/դպրոցի ներքին կարգ. կանոնները խախտելու դեպքեր, ծխախոտի օգտագործման դեմ պայքար/: | 2019թ. նոյեմբեր<br>2020թ. նոյեմբեր<br>2021թ. նոյեմբեր | 20%<br>15%<br>12% | Կազմակերպվել են քննարկումներ, զրույցներ: |
| Աշակերտական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով | | | |
| Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից ձեռնարկած միջոցները՝ սովորողների միջև ծագած վեճերին և խնդիրներին | Ամսաթիվ | Աջակցություն ստացած սովորողների թիվը և %՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Մեկնաբանություն |

| | | | |
|---|---|---|---|
| լուծում տալու նպատակով | | | |
| 1. ԱԽ-ի որոշմամբ դպրոցում գործում է ուսումնադաստիարակչական հանձնախումբ, որը զբաղվում է կարգապահական հարցերով: Ուսումնադաստիարակչական հանձնախումբը աշխորհրդի նիստերում քննարկման է դնում կարգապահական խնդիրներ առաջացնող սովորողների հարցը: Նրանց նախաձեռնությամբ ուստարվա ընթացքում դասարաններում կազմակերպվում են քննարկումներ: | 03.10.19թ.<br>13.10.20թ.<br>01.10.21թ. | 2%<br>1%<br>1% | ԱԽ-ն համագործակցում է տնօրենի տեղակալների, դասղեկների և ուսուցիչների հետ: |
| 2. ԱԽ-ն հայտնաբերում է լիդերներին և աշխատանք է տանում նրանց հետ, համագործակցում է տնօրենի տեղակալների, դասղեկների և ուսուցիչների հետ: | 2019-2020<br><br>2020-2021<br><br>2021-2022 | 5/1.4%<br><br>5/1.2%<br><br>6/1.3% | Լիդերների հայտնաբեր-ման նպատակը նրանց բացասական և դրական հատկանիշների բացա-հայտումն է, բացասա-կանը հնարավորինս չեզոքացնելը և դրականը օգտագործելը՝ կազմա-կերպական, կարգապա-հական հարցերը լուծելու ժամանակ: |
| 3.ԱԽ-ն դասղեկների հետ միասին իրականացրել է զրույց-քննարկում թիրախային խմբի հետ «Կոնֆլիկտի կառավարում, հարգանք միմյանց նկատմամբ», ‹‹Խառնվածք և բնավորություն››, «Կոնֆլիկտային իրավիճակներն ու դրանց լուծման ուղիները›› թեմաներով: | Ուստարվա ընթացքում | Միջինը 180 սովորող<br>40 % | Նպատակն է սովորող-ներին օգնել, որպեսզի նրանք գիտակցեն, որ կոնֆլիկտը հասարակա-կան կյանքի նորմալ վիճակ և օրինաչափ երևույթ է: Պարզապես պետք է գտնել այն լուծելու ամենահարմար տարբերակները: |
| 4. ԱԽ-ն կազմակերպել է կլոր-սեղան քննարկումներ.<br><br>1.«Ես և իմ ուսուցիչը» թեմայով<br><br>2. «Սովորող-ուսուցիչ» թեմայով | <br><br>23.04.2019թ.<br><br>12.04.2022թ, | <br><br>30 սովորող<br>9.2%<br>38 սովորող<br>8.4% | Նպատակն է<br>1.Մեծացնել սովորողների միջանձնային շփումը<br>2.Կարևորել կոնֆլիկտա-յին իրավիճակներում սովորողների հավասարակշռության պահպանումը: |
| 5. ԱԽ-ի անդամները դասղեկների հետ միասին դասարաններում պարբերաբար կազմակերպել են զրույց-քննարկումներ ընկերասիրության, համբերատարության, հավասարակշռության, փոխզիջման վերաբերյալ: | Ուստարվա ընթացք | 90% | Նպատակն է սովորողներին օգնել գտնելու կոնֆլիկտների լուծման ամենահարմար ճանապարհները, ցույց տալ, որ համբերությունը կրթում է մարդու սիրտը, միտքը և մարդը դառնում է ավելի խոհեմ, կարևորել փոխզիջումը մարդկային հարաբերությունների մեջ: |
| 6. Աշակերտական խորհուրդը դասղեկների հետ համատեղ դասղեկական ժամերին իրականցրել է<br><br>ա.«Կոնֆլիկտային իրավիճակներն ու դրանց լուծման ուղիները»<br>բ. «Հանդուժողականություն և համբերատարություն»<br>գ.‹‹Խառնվածք և բնավորություն›› | 2019-2020 ուստարվա ընթացք | 350/100% | Նպատակն է.<br>1.Նպաստել սովորողների մարդասիրական դաստ-ը<br>2.Կարևորել |

| | | | |
|---|---|---|---|
| «Վարվելակերպի գեղագիտություն, խոսքի կուլտուրա»<br><br>ա.«Սովորողի իրավունքներն ու պարտականությունները»/<br>բ.«Կոնֆլիկտային իրավիճակներն ու դրանց լուծման ուղիները»<br>գ.‹‹Վարվելակերպի գեղագիտություն››,<br>դ.‹‹Խառնվածք և բնավորություն»<br><br>ա. «Սովորողների իրավունքներն ու պարտականությունները»<br>բ.«Կոնֆլիկտի կառավարում, հարգանք միմյանց նկատմամբ»<br>գ.‹‹Խառնվածք և բնավորություն»<br>դ.«Ոսկե կանոնով ապրելը և գործելը որպես մարդու վարքագծի կատարյալ սկզբունք» | 2020-2021 ուստարվա ընթացք<br><br>2021-2022 ուստարվա ընթացք | 395/100%<br><br>448/100% | հավասարակշիռ վարքագիծը, ագրեսիայի թոթափումը, զիջողականությունը: |
| Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած միջոցառումները.՝ ներառյալ շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից սովորողների տոկոսը | | | |
| Նկարագրել վերջին 3 տարում աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնած վերոնշյալ միջոցառումները | Ամսաթիվ | Մասնակից սովորողների տոկոսը՝ սովորողների ընդհանուր թվի նկատմամբ | Մեկնաբանություն |
| 1.Կազմակերպվել են Անկախության օրվան նվիրված միջոցառումներ.<br>«Իմ անկախ Հայաստան» թեմայով շարադրության մրցույթի անցկացում | 20.09.19-27.09.19 | 8.5% | ԱԽ-ն համագործակցել է պատմության և հայոց լեզվի ուսուցիչների հետ: |
| 2.Գիտամշակութային մասնագիտացված հանձնախմբը ուսուցչի տոնին կազմակերպվել է ուսուցիչների հանդիսավոր ընդունելություն: | 04.10.2019թ. | 10% | Կազմակերպվել է համադպրոցական միջոցառում: |
| 3. Սպորտային խաղեր.<br>1.Կազմակերպվել են միջդասարանային և համադպրոցական սպորտային խաղեր /ֆուտբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, հրաձգություն/<br><br>1. Սեղանի թենիսի մրցույթ<br><br>2. Վոլեյբոլի միջդասարանային մրցումներ<br><br>3. Հրաձգության մրցումներ<br><br>4. Ֆուտզալի հուշամրցաշար<br><br>5. Հրաձգության մրցումներ | 20.11.19-10.12.19<br><br>հոկտեմբեր նոյեմբեր 2019թ.<br><br>29.01.20թ-31.01.20թ.<br><br>ապրիլ-մայիս 2021թ<br><br>31.01-02.02 01.04.22թ. | 8.6%<br><br>17%<br><br>7%<br><br>10%<br><br>11% | Առողջ ապրելակերպի նպատակով դպրոցի ԱԽ, մասնավորապես սպորտային /ռազմամար-զական/ հանձնախումբը կազմակերպել են սպորտային խաղեր, մրցումներ՝ համագործակ-ցելով տնօրենի ՄԿԱ-ի գծով տեղակալի, ֆիզկուլտուրայի ուսուցիչների և զինղեկի հետ: |
| 4.ՄԻԱՎ-ի և հեպատիտ B-ի ու C-ի նկատմամբ հետազոտության եվրոպական շաբաթվա շրջանակներում ԱԽ-ն կազմակերպել է «ՄԻԱՎ, ՁԻԱՀ-ի կանխարգելման ուղիները» թեմայով զրույց, տեսանյութի դիտում, պատրաստվել են բուկլետներ, | 02.12.19 -06.12.19<br>01.02.2020թ.<br>29.11.21 -03.12.21 | 30%<br>25%<br>22% | Նպատակն էր սովորողների իրազեկության բարձրացնելը ՄԻԱՎ-ի և հեպատիտ B-ի ու C-ի վերաբերյալ: ԱԽ-ին աջակցել է դպրոցի |

| | | | |
|---|---|---|---|
| տեղեկատվական թերթիկներ և բաժանվել սովորողներին | | | բուժաշխատողը, կենսաբանության ուսուցիչը: |
| 5. ԱԽ-ը կազմակերպել է դպրոցի ամանորյա ձևավորում | 2019-2020<br>2021-2022<br>դեկտեմբեր | 80% | Նպատակը եղել է դպրոցում ամանորյա տոնական տրամադրու-թյուն ստեղծելը: |
| 6. ԱԽ-ը նախաձեռնել և իրականացրել է «Վնասակար սովորույթներ»/թմրամիջոց, ծխախոտ/ թեմայով էլ. նյութերի դիտում | 23.11.19թ-<br>27.11.19թ. | 30% | Սովորողների առողջու-թյանն ուղղված միջոցա-ռումների կազմակերպում |
| 7.ԱԽ-ը կանանց միջազգային օրվա կապակցությամբ ուսուցիչների համար կազմակերպել է միջոցառումներ /հանդիսավոր ընդունելություն, տոնախմբություն, անակնկալ/ | 09.03.19թ.<br>09.03.21թ.<br>09.03.2022թ. | 80%<br>70%<br>65% | Համադպրոցական միջոցառում |
| | | | |
| 8. Կազմակերպվել է այցելություն Եղեռնի հուշահամալիր | 2020-2021 ապրիլ<br>2021-2022 ապրիլ | 5%<br>10% | Պատմական ժառանգա-կանության պահպանման կարևորությանն ուղղված միջոցառում: |
| 9. ԱԽ-ը պարբերաբար կազմակերպում է բարեգործական ակցիաներ.<br><br>44-օրյա պատերազմի ժամանակ օգնություն հայկական բանակին | հոկտեմբեր-նոյեմբեր 2020թ. | 90% | 2020թ. աշնանը սով-ը գործել են քողարկիչ ցանցեր, պատրաստել օգնության արկղիկներ՝ դեղորայքով, պարենա-մթերքով, հիգիենայով և առաջին անհրաժեշ-տության իրերով: Նաև գրել են նամակներ զինվորներին; |
| 10. Կազմակերպվել է այցելություն EXPO կրթական ցուցահանդես | ապրիլ 2021թ. | 2.5% | Այցելությունը կազմակերպվել է տնօրենի՝ ՄԿԱ-ի գծով տեղակալի և դաս-ղեկների աջակցությամբ: |
| 11. ԱԽ-ը պարբերաբար կազմակերպել է կլոր-սեղան քննարկումներ, սեմինարներ, բանավեճեր հետևյալ թեմաներով.<br><br>1.«Ինչպես ճիշտ ընտրել մասնագիտություն»<br><br>2. «Ինչպես պատրաստել գրագետ CV»<br><br>3. «Ինչպես դառնալ առաջնորդ 21-րդ դարում»<br><br>4. «Ինչպե՞ս տպավորել մարդկանց»<br><br>5. «Գլոբալ տաքացում»<br><br>6. «Կյանքի հմտություններ, ինչպես լինել ակտիվ լսող» խաղ-վարժանք թրեյնինգ<br><br>7.Կազմակերպվել է հեռավար սեմինար «Ի՞նչ է ՄԻԱՎ-ը, ՁԻԱՀ-ը» թեմայով<br><br>8.«Մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունները ՀՀ-ում և արտերկրում» | 31.03.2020թ.<br><br>15.10.19թ.<br><br>15.11.19թ<br><br>20.11.19թ.<br>.<br>28.11.19թ<br><br>14. 11.2020թ.<br><br>01.12.2020թ.<br><br>17.02.2021թ. | 5.7%<br><br>12%<br><br>8%<br><br>10%<br><br>8%<br><br>6%<br><br>8%<br><br>10% | Նպատակն է եղել բարելավել սովորողների միջանձնային շփումը, նպաստել ուսուցիչ-սովորող ջերմ հարաբերություններին, նպաստել հայրենասի-րական դաստ-ը, սովորեցնել կյանքի հմտություններ, առողջ ապրելակերպ, տալ մասնագիտական ճիշտ կողմնորոշում: |

| | | | |
|---|---|---|---|
| 9.«SARS-CoV-2 կորոնավիրուս» թեմայով տեղեկատվական դաս-քննարկում:<br>10. «Մեդիագրագիտություն»<br>11.«Ի՞նչ է ՄԻԱՎ-ը, ՁԻԱՀ-ը»<br>12.«Անձի առանձնահատկությունը և մասնագիտության ընտրությունը»<br>13.«Էկոլոգիական հիմնախնդիրները Հայաստանում»<br>14.«Սովորող-ուսուցիչ» | մայիս 2021թ.<br>10.11.2021թ.<br>29.11.2021թ.<br>22.02.2022թ.<br>18.03.2022թ.<br>12.04.2022թ. | 20%<br>33%<br>15%<br>9%<br>9%<br>8% | |
| 12. ԱԽ-ը հայոց բանակի կազմավորման օրվա կապակցությամբ կազմակերպել է ուսուցիչների, սովորողների հանդիսավոր ընդունելություն և տոնախմբություն | 29.01.2019թ.<br>27.01.2020թ.<br>27.01-29.01 2021թ. | 90%<br>90%<br>90% | Համադպրոցական միջոցառում |
